ՏԱՐԱԶ

Ա. դրիւրի չափ է թուած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 9 կիրակի 1 մարտի | իններորդ տարի 1898

Շարունակւում է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ թաժանորդագրութիւնը



ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Ես չարչարւում եմ ես իմ անկողնում,
Շրջւում եմ, շրջւում վաստակած, տրկար,
Եւ մորերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Եւ գիշերը մի՛ւթ, գիշերը երկար:

Ա՛խ, մի ժամանակ, եւ դեռ նոր էր այն,
Անվերջ խնջոյք էր կեանքը ինձ համար,
Հրճւանքը աչքիս չէր թւում ունայն,
Ոչ էլ գիշերը տաղտկալի, երկար:

Է՛հ, ինչպէս երազն այն գիշերների
Եւ այն հանգիստը անվրդով, պայծառ,
Հոլորը անցան աննկատելի,
Որ դարձնեն այսպէս գիշերը երկար:

Եւ ցնորք, եւ յոյս, եւ հրճւանք, եւ սէր,
Եւ ոյժ, եւ եռանդ,—կորաւ ինչ որ կար,
Եկան սեւ օրեր ու ծանր հոգսեր
Եւ դարձրին այսպէս գիշերը երկար:

Այժմ ահագին շիրմի քարի պէս
Ճնշում են կուրծքս մորերը խաւար,
Եւ տրտնջում եմ, եւ տանջւում եմ ես,
Եւ դա՛ր է թւում գիշերը երկար:

Ուզում եմ հանգչել—չեմ կարողանում,
Եւ յուսակտուր, յոգնած, ուժասպառ
Նայում եմ, նայո՛ւմ—դեռ չի լուսանում.
Ա՛խ, այս գիշերներն ի՛նչքան են երկար:

Ծպիռ. Թումանեանց

ՍԵՒ-ՔԱՂԱՔ

(Վէպ Բագրի գործաւանական կեանքից)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ *)

Գ

Յաւարագործները

Գործարանի դրասենեակում նստած էին Առաքելն ու Թերասիմ Պաւլովիչը ու խօսակցում էին, երբ ներս մտաւ գործաւորների և քիսաչիների վերակացու Պաւլիկը և ոլորելով կանգնեց.

— Էլի ինչ կայ, Պաւլիկ, ինչ ես լմացել, ասաց հաշուակարիչը:

— Ջատ չկայ, հինչ պիտմա ընի, Թարասիմ Պաւլիչ:

— Ախար ինչքի ես եկել, ինչ ես ոլորում, փորի ցաւ ունես, ասա:

— Մին ամիս ա, ասըմըմ, պէ վէրուշ չըք տնըմ: Եկալ ըմ ասըմ, որ սրանից էննան ես էլ պըտասխանատու չըմ:

— Ի՞նչ ես ասում, պարկն ասա:

— Ջշերնները Աւանէսը շատ ա քօն ընըմ, կոլծին կարքին մտէկ չի անըմ. վէր մին պեան պըտահի, ես պըտասխանատու չըմ:

— Ի՞նչ անենք, ինչպէս անենք որ քէֆդ դայ, Պաւլիկ:

— Իմ քէֆիս մըհալ չըմ ասըմ: Աստուած վէչ անի, որ մին պեան պըտահի, իմ անըմս ա խայտառակ ելու:

— Մարդ էլ չկայ, որ տեղը կանգնացնենք:

— Խէ՛ չկայ, մարդից շատ հինչ կայ, քանինըս օգում...

— Հիմի կարգին մարդ ունե՞ս, պատրաստել ե՞ս:

— Օղըմըս հինգը պերում:

— Ախար Յովհաննէսը հին ծառայող է, տուն, ընտանիք ունի, ասաց Առաքելը, ինչպէս չանկարծ ճանապարհ էք դցում: Ուրիշ գործ կա՞յ նրա յարմար գործարանում:

— Խէ՛ չի օնենք, ամմա կաչագար ամալ չի կեալ, վէր մընայ:

— Պաւլիկ, ասաց Թերասիմը, գնա, Թող գիշերս էլ պահի, առաւօտը բէդին էլ ասենք, ապա նոր մարդ էգուց իրիկուն կանգնեցնենք նրա տեղը:

— Լեաւ:

— Դու այնպէս արա, որ այդ ասածդ մարդը առաւօտը բէդին ներկայանայ...

*) Տես **Տարազ** № 7.

Պաւլիկը ուրախ հեռացաւ: Յովհաննէսը մի նորաշէնցի տղայ էր Ղարաբաղից: Ունգին ընտանիք ունէր, հայր, մայր, կին և երեք երեխայ: Թէև երեք ուրիշ եղբայրներ էլ ունէր, բայց նրանցից մինը բաժանուել էր հօրից, ապրում էր Ղուշում, եասաւուլ էր, երկրորդը Բագու մի աղջկայ հետ պսակուել, ձեռք էր քաշել հայրենի տնից: Իսկ երրորդը Աստրախան էր գնացել և այնտեղից կորել, անհետացել էր: Տան ծանրութիւնը բոլորը մնացել էր Յովհաննէսի վզին, որ ամսական ստացած տասն և հինգ րուբլուց ինքը լուբլին ուղարկում էր տուն, իսկ վեց րուբլով ինքն ապրում: Այդ վեց րուբլով ուտում, խրմում, հագնուում, մաքրուում և ծխում էր: Դեռ պէտք է իմանալ, որ այդ վեց րուբլուց վճարելու էր պոտի ծախսը, ամեն ամիս քսանը հինգ կոպէկ: Յովհաննէսը օրական միայն մի աբասի էր ծախսելու:

Եթէ երկու զրանքայ հաց առնէր, քաղցած կըմնար այն աստիճան, որ ստամոքսը կըսկսէր բորբոքել և նրան նեղել. իսկ եթէ երեք զրանքայ առնէր օրական, պիտի տար տասն երկու կոպէկ: Նա ծխելու քամբախտ սովորութիւն ունէր և առանց ծխելու չէր դիմանալ: Օրական դոնէ հինգ պապիրոս պիտի ծխէր, որ առնուազն արժէր մի կոպէկ. մնում էր նրան հօթը կոպէկ: Մինէ երկու օրը մի անգամ տաք կերակուր, կամ մի կտոր խորոված ուտելու չէր այդ թշուառը, որն օրական տասն երկու ժամ հսկելու էր կաթսաների առաջ, դժոխային ջերմութեան մէջ, որի մի պնակին, կամ զրանքայ մսին տալիս էր վեց կոպէկ, կամ օրական երեք կոպէկ, մնում էր նրան հետևաբար չորս կոպէկ: Այդ չորս կոպէկով պիտի շոր դնէր հագնելու, կօշիկ՝ մանզալու, գլխարկ ծածկելու. սպիտակեղէն և օճառ գլբանք լուանալու: Իսկ շաքար, չայ, միրգ, յատկի բան է, աւելորդ շռայլութիւն է...

Բայց թէ ինչի ստացած փողից ինքը վեցից աւելին չէր կարող ծախսել: Ինչի ինքը րուբլին տուն էր ուղարկում: Տանը այդ փողով վեց հոգի էին կառավարելու, իսկ ինքը մենակ էր շռայլում վեց րուբլին: Տանը ալտ և այգի ունէին, բայց պարտք էլ կար, այդ կալւածքը երեք ամբողջ տարով տուել էին պարտատիրոջ, երեք տարից չետոյ միայն պիտի տիրանային հողերին, իսկ այդ երեք տարում Յովհաննէսը պիտի կերակրէր վեց մարդու: Դեռ բարեբախտաբար Յովհաննէսի մեծ որդին ինքը տարեկան էր և ծառայում էր էրանց շէնացի Սարգիս ապօր մօտ, իր ղլուխը պահում և տարեկան մի քանի փութ ցորեն էլ տուն էր բերում: Ձար չունէր Յովհաննէսը, երկու ամբողջ տարիներ էլ ծառայելու էր ա-

ուանց տուն վերադառնալու։ Եթէ մէկ-երկու ամիս առանց տեղի մնար, տուն փող չուղարկէր, կրկին պարտքի տակ էր ընկնելու Ծերունի Հայրը և ոմէ է իմանում, թէ քանի՛ տարով նորոգելու էր Յովհաննէսի տանջանքների պայմանաժամը և հողը նորից դերուեհան էր մատնելու օտարի ձեռքում։

Յովհաննէսը չարաչար աշխատում էր։ Թոնիրի մէջ կէսից հետ կախուելով հաց եփելն աւելի դիւրին է, աւելի հեշտ է, քան թէ ամերիկական նաւթի կաթսաների և շոգեկաթսաների առաջ, մշտաբորբոք բոցերի դէմ կանգնելը, անընդհատ կրակի բոցերը բորբոքելով, շտուս, նաւթի, կերոսինի, մազութի խողովակներին հսկելով։ Ամեն օր, անընդհատ, տօն թէ կիրակին առանց պատրելու տասեակն երեք հարիւր վաթսուն օր մի՛ևնոյն տեղը բռնած քիւլհանջին հսկելու է բորբոքած հուլին և կարմրատակած կաթսաներին։ Յովհաննէսը քսանը չորս ժամից տասն երկու ժամ պարտաւոր էր ջերմ կրակի դէմ կանգնել — վեց ժամ դիշերը, վեց ժամ ցերեկը փոփոխակի։ Առանց կանոնաւոր հագուստի, առանց կարկին սնունդի լինչպէս հսկէր Յովհաննէսը և չըթուլանար ու չըթմրէր։ Մ՛իթէ Յովհաննէսի ընկերները չէին քնում, չէին թուլանում, չէին թմրում այդ կաթսաների ջերմութեան առաջ և քարի նման դիմադրում էին բնութեան պահանջին։ Մ՛իթէ նրանք դիւթական զօրութիւն ունէին և արևպաշտների քարմների նման ատրուշաններին, բազիններին շուրջը մշտնջենաւոր հուրը բորբոքում էին առանց յոգնութիւն զգալու, առանց բնութեան պահանջի առաջ յաղթահարելու։

Մեքենատան լուսամուտի առաջ նստած էր Դաւիթը մի անծանօթի հետ և խօսակցում էին։ Մեքենաների շարժմունքը, շոգիների շշուլով ազմուկը չէր թողնում, որ նրանց ձայնը ուրիշների ականջներին հասնի. նրանք առանձնացած, իրար գաղտնի հաղորդում էին իրանց մտքերը։

— Դաւիթ, հինչ օղըմըս արա, առաջի ամսուայ գօլլըդը քեզ ընի, մէնակ թա նի մընեմ։

— Արզըմանն, գու արխայլին կաց, նի մտած պըռացած ըս, կառավարչին նհետ էլ ըմ խօսացալ։

— Գէ էլ հինչ ասեմ, տու ըս գիդըմ։

— Արխայլին քընա մըհէկ պեանիտ, ամմա էքուց ըստեղերք շօռ տո։ Մինն էլ ըմ ասըմ, ձեր Թումասը փող օնի, տըսնըհինգ մանէթը հետըտ պերես հա՜։

— Բա վէր Թումասը տա վէչ։

— Խէ՞ չի տալ. տարտակ կեսո վէչ հա՜։

— Լեաւ, պարի քշեր։

— Լիսը պարի. չըմոռանաս հա՜։

Արզըմանը գնաց։ Դաւիթը մթնում մտաւ մեքենատունը, շոգեխողովակների, հեղկմուղների այլև այլ ծորակները բացեց, հաւաքած ջրերը բաց թողեց, ամեն բան կարգի բերելով դիմեց դէպի իր սենեակը։ Այդ մէջոցին Առաքելը սառցարանների կողքից անցնելով գնաց մազութի աւազանի կողմը. Դաւիթը ոտքի ձայն առնելով կանգնեց և կանչեց.

— Հո՜ւ ա։

Առաքելը առանց պատասխանելու՝ շարունակեց իր ընթացքը։ Դաւիթը կասկածանքի մէջ ընկաւ, առաջ շտապեց սենեակի կողմը, քիչ յետոյ ետ դարձաւ և հետևեց Առաքելին։ Մազութի աւազանի մօտ նրան չըգտաւ, կաթսաներին պատահեց և մըտնաց տարակուսանքի մէջ, թէ արդեօք մեքենատան մօտ տեսած մարդը նա էր, թէ ոչ։ Արդեօ՞ք իրան Արզումանի հետ խօսակցութիւնը լսեց թէ ոչ։ Առաքելը առանց ուշադրութիւն դարձնելու, խառնարանի աշտարակների կողքից անցաւ, դուրս գնաց և մի ւս դռնից բարձրացաւ իր սենեակը, ընկաւ անկողնի վրայ կանչելով.

— Աստած իմ, մ՛իթէ տասնևհինգ րուբլու համար կարելի է այսքան ստորութիւն յանձն առնել և տանջել, տանջել թշուառ արարածներ...

Այնքան շշմել էր այս դառն մտքով, որ Առաքելի քունը տարել էր և առանց շորերը հանելու քնել մնացել էր։ Յանկարծ դարթնեց կէս գիշերից մի-երկու ժամ յետոյ։ Ամեն կողմ տիրում էր մեւեւլային լուութիւն, ամենքը հանգստացել էին, միայն մեքենաները, հեղկմուղները, շոգեկաթսաները և նաւթի կաթսաները անընդհատ գործում են, շը-շըւացնելով, բլբլացնելով։ Առաքելը, քուն արած, մենակութիւնից տաղտկացած, ուզեց իջնել և մանգալ գործարանը և քննել թէ գիշերապահները ճշտութեամբ էին կատարում իրանց պարտականութիւնները։

Նա առաջ գիմեց կաթսաների բակը։ Ոչ ոք նրան չէր խանգարում և ոչ ոք չէր հետևում։ Նա մօտեցաւ առաջին հսկողին, որ կրթնել էր պատին, աչքերը խփել էին, երեսը կաթսաների կողմն էր ուղղած, ոտքի վրայ քնում էր։ Առաքելը մօտեցաւ նրան, նա չի յիշում յոգնածութիւնը, և ջերմութիւնը նրան թմրեցրել է։ Ձեռքում մի գիրք էր երևում և այնքան թուլացել էր մատները, որ քիչ էր մնում վայր ընկնէր։ Առաքելը զգուշութեամբ առաւ գիրքը, բաց արաւ, մօտեցրեց կրակի բոցերին, տեսաւ Գամառ-Քաթիպայի այն երգը, որ երգել ու թմրել էր հսկողը. «Հազիւ լրացաւ fսաՆը մէկ surhս»...



Մի երիտասարդ, քսանը մէկ տարեկան գործաւոր, երկաթից ամուր անդամներով, ուրիշ ինչ յարմար երգի վրայ կարող էր կանգ առնել, երգել, խորհել, խորհիլ ու քնել: Փնել մի այնպիսի քնով որ դուցէ էլ յաւիտեան չզարթնէ: Այնպիսի վտանգաւոր կայութեան մէջ, որ ամեն վայրկեան կարող է անզգուշութիւնից, մի թեթև անզգուշութիւնից ահագին փորձանքի ենթարկել ամբողջ գործարանը: Առաքելը գիրքը ձեռին մօտենում է երկրորդ հսկողին: Սա էլ քնած է, բայց ոչ ուղի վրայ, այլ պատին փակցրած տախտակի կտոլի վրայ նստած: Որբի, խղճալու նման ծալել է ձեռքերը գրկում և կորացել, մտորել, մոլմոքել ու թմբել: Մի թեթև հարւած, մի անզգոյշ հաւաստարկշռութեան տատանում կարող է նրան գցել տաք խողովակի վրայ, խաշել ու խորովել: Թևի տակից երևում է մի թուղթ, գուցէ էլի ոտանաւոր: Առնում է ձեռքից Առաքելը և ինչ է նկատում— նամակ.

«Սիրելի թագ ու պսակ համբարձում».

Նամակ, այն էլ կնոջից: Երևի փող է ուղում կամ մարդուն է կանչում: Բայց Հարկաւոր չէ մտնել ուրիշի գաղտնիքների խորքերը, ով է իմանում, ինչ ցաւեր ունեն: Ծալում է նամակը և դնում կրկին գրպանը: Այն կողմից զառանցանքների ձայն է լսում Առաքելը, ահմրում է, անշարժ կանգնում է պատի տակ և լսում:

—Ա՛խ Գիւլնազ չան, հիրըմ ազատելու էս գժոխքից, որ կեամ քու իրտէտրտ ընդնեմ: Համբերի՛ր, համբերի՛ր, համբերի՛ր մին պարտքից ազատեմ...

Առաքելը գլուխը շարժելով առաջ է գնում և սթափեցնում է համբարձումին: Զւարում է խեղճ գործաւորը, սոսկում է, գլուխը կախ գցած աղերսալի նայում է, կարծես ուզում է ասել—ների՛ր ինձ, գթա՛ ինձ, մեղաւոր եմ...

—Համբարձո՛ւմ, հերթապահ ե՞ս, հարցնում է Առաքելը:

—Հրամանքդ:

—Գնելո՞վ ես հսկում այս կաթսաներին...

—Ապէր...

—Խելքդ գլխիդ գործին նայէ, մի րոպէում կարող էք ձեր կեանքն էլ, մեր կեանքն էլ կրակի մատնել և տակն ու վրայ անել գործարանը:

—Բախշի ապէր, սօրի ցիրեկան Դաւութը տրուբէքը կապել տըւաւ, Թող չարաւ վէր քօն ընենք: Ուի թիւլացալի, քօն չի: Օրիշ դօնըմ սկի պատահալ չի: Էնքան եկալըս քընեցալ մին դօնըմ տէ՞սալ ըս ինձ քօն:

—Փորձանքը մի օր, մի րոպէում կարող է պատահել, համբարձում: Դու պարտաւոր չէիր աշխատելու, ինչի՞ չասիր, որ գլուխը հերթապահ ես:

—Դաւութին ճրնանչըմ չըս, խօսքին վէր խօսք պերես, էլ պրծում չինիլ:

—Դաւիթը գործ չունի, դու որ այստեղ ես կանգնելու գիշերը, էլ ցերեկը աշխատելու պարտաւոր չես: Ամեն մարդ իր գործին է նայելու, ոչ թէ ուրիշ բանի:

—Բախշի, ապէր...

—Առ այս գիրքը, էլ չըտեսնեմ քեզ քնած... Մեր մէջ այս բանը, թո՛ղ մարդ չ'իմանայ:

Առաքելը հեռացաւ, գնաց դեսպիլաթի մուտքի սենեակը, ընդունարանը: Գարմօնի ձայնը հեռւից գալիս էր, Ալլօն ածում էր և երգում.

«Մեր հայրենիք, թշուառ աճէր»...

Ձայնը ծանօթ է Առաքելին, նա կանդնեց պատի տակ, լսում է քաղցր ձայնը: Ալլօն շարունակում է «Ահա եղբայր, ֆեզ մի դրօշ»...

Ալլօն դադրել չըզիտէ, նա հրզելով լուսացնելու է, նա սպասելու է մինչև յաջորդ հերթապահի գալը: Ալլօն երբ նկատեց Առաքելին՝ ձայնը կտրեց:

—Ալլօն ո՞նց ես, դեսպիլաթը չեկա՞ւ:

—Չէ, ապէր, Հալա զաղնա կեամ:

(Կըշարունակի)

ՊԱՐԻԶ

ՎԷՊ ՀՄԻԼ ՋՕՀԱԾԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Շարունակութիւն *)

Պիէրի դէմքին նկատւում էր կրկնակի ժառանգականութիւն. բարձր, բաւական յայն ճակատը նա ժառանգել էր իր հօրից, իսկ քնքոյշ, սիրոյ ծարաւ շրթունքները—մօրից: Եւ այդ հակապատկերում նկատւում էր մարդու մշտական կռիւը զգացմունքի և բանականութեան հետ, մի կռիւ, որ թողնում էր այդ նաղաձ դէմքի վրայ այն րոպէներում, երբ Պիէրը չէր հետևում իրան, նրա ներքին խռովութեան պարզ հետքերը: Շրթունքները պարզ խոստովանում էին, որ դեռ կեանք են խնդրում, սիրոյ, անձնւիրութեան ծարաւ են, որին նա երբէք չէր ուզում բաւականութիւն տալ: Իսկ խիստ ճակատը, այդ ամուր ոսկորը, որ նրան ստիպում էր տանջւելու, կանգնած մաքառում էր իրան պաշարող մոլորութիւնների հետ: Պիէրը կազդուրում էր իրան, թագցնելով դատարկութեան սարսափը, որի մէջ կռւում էր իր միտքը, և պահպանում էր վսեմ կերպարանքը, անում էր սովորական շարժումներ, արտասանում էր պատշա-

*) Տես Տարազ № 8.

ճաւոր բառեր։ Մայրը, ծնկաչոք կանգնած միւս կանանց մէջ, սպասելով նրա աղօթքների ներդործութեան, հաւատում էր, որ նա այդ րոպէին գտնւում է Քրիստոսի հետ միասին, և բարեխօսում է իր որդու համար։ Եւ նրան թւում էր, արտասուքի աչքերին, որ նա շրջապատւած է լուսապսակով և գեղեցիկ է որպէս Աստւածային ողորմութեան ուսեսարեր հրեշտակ։

Ընծայման խորհուրդը կատարելով, Պիէրը յանկարծ անհամարանք զգաց դէպ իրան։ Որպիսի միամիտ երեխայ մնացաւ նա Լուրդում և Հռոմում, անձնատուր լինելով իր հաւատի և սիրոյ ծարաւին։ Ի՞նչպէս կարող էր ծագել նրա մէջ այն միտքը, որ ինքը, այդպիսի փոքր մարդը, կարող է սովորեցնել Պապին, ստիպել նրան սուրբ լինելու և վերպարանափոխել աշխարհը։ Նա ամօթ էր համարում մտաբերել դրա մասին։ Ով գիտէ ինչպէս ծիծաղում էին նրա վրայ։ Կարմրում էր նա նոյնպէս և ապանդ առաջ բերելու մտքից։ Նա իրան երեւակայում էր Հռոմում, մտադրւած մի այնպիսի դերք դրելու, որի մէջ նա բոլորովին հեռանում է կաթոլիկութիւնից, նոր, հանրիշխանական հաւատ, կենդանի և մաքուր աւետարան քարոզելու նպատակով։ Ծաղրալի անմտութիւն, ապանդ։ Նա Պարիզում ճանաչում էր մի վսեմ հոգու և մեծ խելքի տէր աբբայի, որ փորձել էր իրագործել այդ սպասած և նախագուշակած ապանդը։ Որպիսի վշտալի և ծաղրալի վիճակի հանդիպեց այն աղքատի դործը, ընդհանուր թերահաւատութեան, մեկի սառը անտարբերութեան, իսկ միւսի վիրաւորեցուցիչ ծաղրերի ժամանակ։ Եթէ մեր օրերում լինէր Լիւթերը, ամենքից մոռացած, քաղցած կըմեռնէր Յաինիոլի վերնայարկում։ Ի՞նչ ապանդ կարող է գոյութիւն ունենալ թերահաւատ ազդի մէջ, որ պատրել է հետաքրքրել եկեղեցու գործերով և՛ իր յոյսերը ուրիշ բանեի վրայ է դրել։ Ծանր էր թւում Պիէրին վերարկուն այն րոպէին, երբ նրան ալեկոծում էին այդ տեսակ մտքերը։ Նա արհամարհում էր իրան նրա համար, որ եկեղեցու խորհուրդը կատարում էր մեքենայաբար։

Երբ նա կլիսով չափ լցրեց սկիհն գինով և ձեռքերը լաց, ապա մի հայեացք ձգեց երեխայի մօր վրայ, որ եռանդուն պաղատանքով նայում էր իրան։ Այստեղ նրա մէջ միտք ծագեց, որ միմիայն նրա համար է մնացել ինքը քահանայ, դէպի մարդիկն ունեցած գթութիւնից զրկւած նա չի քանդել իր խոստումը և ինքը թերահաւատ լինելով, պահպանել է ուրիշների հաւատը։ Բայց մարդու այդ հերոսական դերը, որ կապկել էր իր պարտականութիւնների հետ, միմիայն սաստկացնում էր նրա հոգեկան տանջանքները։ Արդեօք չի՞ ստիպում ամենահասարակ պնուութիւնը հանելու իր վերարկուն և մտնել աշխարհ։ Նրա կեղծ դրութիւնը երբեմն ստիպում էր արհամարհելու իր անպէտք հերոսութիւնը, և նա հարցնում էր ինքն իրան, արդեօք անազնուութիւն չէ և վտանգաւոր թողնել ամբոխին ապրելու նրա մէջ, որին ինքը սնապաշտութիւն էր համարում։ Ի հարկէ աստւածային արդարադատութեան մասին եղած հասկացողութիւնը նրա մասին, որ գժբախտները կըվարձատրւին իրանց բոլոր աշխարհային տանջանքների համար, իբրև մխիթարութիւն է չքաւորների համար։ Բայց նրանք արդէն սկսում են պահանջել իրանց բախտաւորութեան մասը երկրիս վրայ։ Քրիստոնէութիւնը հիմնւած է Աստւածային գթութեան գաղափարի վրայ, որ ուղղում է օրհասական անարդարութիւնը, հէնց նոյն իսկ նրանք էլ չեն բաւականանում այլևս քրիստոնէական գթութիւնից և արդարութիւն են պահանջում։ Սովեալների վերաբերութեամբ բարձրացած աղաղակը լսւում է ամենքի բերանից և բարեգործութիւնը անկարող է լինում զսպելու նրան։

Այն միտքը, թէ իր համար սկսւում է երրորդ փորձ, այն է արդարութեան և գթութեան կռիւ, այսինքն մտքի և սրտի մէջ—կռիւ այդ ահագին Պարիզում, որ լիքն է սարսափելի անչափութեամբ, աւելի ևս տխրեցնում էր Պիէրին։ Աստւածային հաւատի կարևորութիւնը շարունակում էր հակառակել մտքի բռնակալութեան, ինչպէս բաւականութիւն տալ գաղտնիմաստ ծարաւին, որ չատուկ է ամբոխին։ Կարող է արդեօք գիտութիւնը, ընտրեալ շրջանից դուրս, չագեցնել ցանկութիւնները, մեղմացնել տանջանքները, կերակուր տալ մտածութեան։ Եւ ինչ կըպատահի նոյն իսկ նրա հետ գթութեան այդ աղետի մէջ, որ մենակ պահպանում էր նրան վերջին երեք տարին, անցնելով նրա բոլոր ժամերը, փաղաքշելով նրան անիրագործելի յոյսերով։ Ի՞նչ օգուտ է տալիս որևէ մեկին նրա անձնիրութիւնը։ Նրան թւում էր, իմ գետինը իր ոտների տակ շարժւում է, ականջին լսւում էր ժողովրդի սպառնալի աղաղակը։ Ոչ ոք չի կարող այլևս լսանդարելու հղբայրասպան պատերազմը, որ կոչնչացնի հին աշխարհը—և Պիէրը, սաստիկ վշտացած ամենայն ժամ սպասում էր վերջնական աղետին, երբ Պարիզը արիւնաշաղախ, կոչնչանայ հրդեհների բոցում։ Նա, որ արհամարհում էր բռնութիւնը, սարսափից սառչում էր և չըգիտէր թէ որտեղ որոնէր նոր հաւատ, որ խանդարէր կորուստը, որովհետև նա նկատում էր, որ ընկերավարական և կրօնական հարցերը մի ամբողջ են կազմում և որ Պարիզի սարսափելի ամենօրեայ խաւնւածքում ամեն ինչ կախւած է և այդ հարցի վճռից։ Բայց կեանքից ընդհատւած, իր հոգևոր կոչման պատճառով, կասկածներով, իր թոյլութեան խոստովանութիւնից շփոթւած, նա անկարող էր վճռելու թէ ուր է ճշմարտութիւնը, կամ ուր է առողջ կեանքը։ Բայց ինչ ըբախտաւորութիւն է առողջ լինել, ապրել, վերջապէս բաւականութիւն տալ իր բանականութեան և սրտին ու խաղաղութեամբ անցկացնել իր օրերը որոշ և ապնիւ աշխատանքի մէջ, որի համար մարդս կոչւած է երկրիս վրայ...

Պատարագը վերջացաւ և Պիէրը դուրս եկաւ տաճարից։ Երբ նա անցնում էր արտասուոտ մօր մօտից, նա դողդոջուն ձեռքերով բռնեց նրա զգեստի ծայրը և սաստիկ համբուրեց, ինչպէս համբուրում են սրբոց նշխարները, որից սպասում են փրկութիւն։ Նա հաւատացած էր, որ կըգտնէ իր երեխային առողջ և շնորհակալութիւն էր յայտնում Պիէրին, նրա գործած, ինչպէս ինքը ենթադրում էր, հրաշքի համար։ Պիէրին սաստիկ շարժում էր նրա սէրը, նրա ջերմ հաւատը, բայց նրա հոգեկան ցաւը աւելի ևս սաստկացաւ խոստովանելով, որ ինքը Աստուծոյ առաջ, բոլորովին հզօր պաշտպան չէ, որի փոխարէն ընդունում էր այդ կինը նրան ,ընդունակ լինելով հեռացնել մահը, իր աղօթքներով։ Սակայն դարձեալ մխիթարւած հեռանում էր կինը և Պիէրը իր մէջ ջերմագին աղերսանքներով խընդ-

ՄԻԱՆՁՆՈՒՀԻ

Ազատարար կայսր Ալէքսանդր II-ի կիսաքանդակը

(Սան-Սթեֆանոյի 16-րդ յօդ. եւ Մյուս. իրենց ազատութեան 20-ամեակի առիթով)

րում էր անյայտ Ոչժին, օգնութիւն խնդրելով այդ խեղճ արարածի համար։

Նա հանեց խորանում իր զգեստը և դուրս եկաւ փողոց, ուր փչում էր ցուրտ քամին։ Ցրտից դողալով նա նայում էր մառախուղի մէջ, որ պատել էր Պարիզին. արդեօք չի ոչնչացրել արդարադատ բարկութեան հեղեղը։ Արդեօք չի պատահել նրա գլխին աղէտը, թողնելով իրանից յետոյ, արձաթագոյն երկնքի տակ, միմիայն ճահիճ, վարակած անօրէն քաղաքի աւերակներով։

(Կըշարունակի)

* * *

Քո ճանչցած... աղուոր դէմքիդ
Սուգ կըպատէր ատենով,
Հիմակ չար խինդ մը շրթունքիդ
Կըփայլփլէ հեգնանքով։

Ատով դու իս ծաղրիլ կուզես,
Հոգուս վերան կըխնդա՞ս.—
Բայց վայթս չէ. ատով սրտէս
Ի՞նչը խլել դուն կրնաս...—

Ան ատեն, երբ կորսնցուցի
Սրտիս սէրն ալ ու սիրան ալ,
Իս ծաղրիլ սորւեցուցի,
Վիրաւորիլ ու տոկալ...

ՕՐ. ՍԱԹԻՒԻԿ ՔՈՅՃԱՃԵԱՆ

ՏԱՆՋԱՐԸ

(Պղպաբանական նորավէպ)

Կարմեճ-Սիլ'ւայի

Նւիրւում է

Տ. Սոֆիա Տէր-Ստեփանեանցին

(Վ ե ր ջ)

Թնճորենին լռեց, յանդիմանական կերպով շարժելով իր թաւախիտ գագաթը, որ յետոյ թեքեց դէպի իր զարթագին դստրիկները և հոգատար կերպով սկսեց նրանց հետ քչփչալ՝ քամու աղմուկի, առւակի, անլուռ խոխոջի և ծղրիտի ձանձրացող կարկաչի հետ։ Խորը վշտացած այդ մերժումից՝ Տանջանքը շարունակեց անշարժ նստել խոտի վրայ, անձկալի կերպով ականջ դնելով պերճաշուք ծառի խորհրդաւոր սօսափիւնին, որն այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ։ Միայն խնձորենու կարմրաթշիկ դստրիկները սկսեցին զարթուն կերպով դարձնել դէպի նա իրանց թարմ թշերը, այն ակներև նպատակով, որ ծաղրելով, գրգռեն որբուկին իրանց գեղեցկութեամբ և առողջութեամբ։ Միևնոյն ժամանակ, չ'ամաչելով, նրանք սկսեցին ծիծաղել, բացարձակ ծաղրելով թշւառ աղջկան, որ ուզեցել էր յանկարծ այնպիսի թարմ գեղեցկուհի դառնալ, որպիսին իրանք, մայրական կողմնապահութիւնից երես առած գոռոզ խնձորներն էին... Տանջանքը լռիկ վերկացաւ, վերջապէս, իր տեղից և նորից շարունակեց իր անվերջ ճանապարհը, շատ ժամեր անընդհատ։ Եւ ահա նա նորից յայտնւեց մարդկային բնակարանից հեռու մի տեղ մի բիւրեղանման, յստակ գետի բարձր ափին, որ հպարտ գլորում էր իր սեգ ալիքները բազմատեսակ, փառահեղ, ծառերի միջով։

Զանազան տեսակի բազմաթիւ գեղեցիկ թռչուններ զարթ ճախրում էին մէկ ճիւղից միւսը, խնդագին ձայն տալով մէկը միւսին անտառի անդորրութեան մէջ, ուր ոչ մի ուրիշ ձայն չէր լսւում։ Հայց ահա մի ինչ որ տեղ, հեռւում, անտառի խորքում, մի դայլայլ լսւեց, առաջին, երկրորդ, երրորդ անգամ, և յանկարծ կտրեց մի վայրկենաչափ։ Եւ լռեցին միևնոյն ժամանակ բոլոր երգչուհի թռչնակները, որոնք ուրախ ճռւողում էին, կարծես խօսք տւած լինէին միմեանց։ Եւ նորից լսւեց այդ դայլայլը, աւելի և աւելի յաճախ, և յանկարծ հեղեղւեց բիւրեղեայ զեղգեղանքով, փոխանելով երկար ծառւալող արձաթահնչիւն նօտ'ի, որն աւելի և աւելի էր յիշեցնում մի ինչ որ տօրօրինակ և անսովոր մելոդիա, որ շուտով բոլորովին պարզ որոշւեց։ Առանձնայատուկ և գարմանալի գեղեցիկ ու դիւթիչ ձայների այդ հիասքանչ ներդաշնակութիւնը աւելի և աւելի էր բարձրանում, կամաց մեծանալով և և լցնելով ամբողջ անտառը, բայց յանկարծ, անսպասելի կերպով, փոխեց նա իր յատկութիւնը և քնքշօրէն հանդարտւելով, լուծւեց օդի մէջ մի վերջին թոյլ զեղգեղանքով, որ նման էր ջրի վրայ կախւած ոլբացող ուռենու քամուց ծփող տերևների սօսափիւնին.. Չմայլւածի նման կանգնել էր Տանջանքը, չըհամարձակւելով մի փոքր անգամ շարժւել, և շարունակում էր ականջ պնել չքացած ձայն-երին, թոյլ կերպով յուսալով. թէ մէկ էլ կըլսի աներևոյթ երգչի հմայական 'երգը։ Եւ երբ անտառային հասարակ երգչուհի-թռչնակները, որ առաջ լռել էին, նորից սկսեցին անվրդով կերպով ճռւողել ծառերի վրայ, միայն այն ժամանակ ուշքի եկած Տանջանքը զարմանքով բարձրացրեց դէպի նրանց իր սև աչքերը և ասաց.

—Ի՞նչ պատահեց այդ թշւառներին, ինչի նրանց ձայնը այդպէս անսպասելի կերպով փոխւեց և երգը յանկարծ դարձաւ այդպէս անհաճելի և անախորժ!

Հանգստացած անցորդուհին կրկին մի քանի րոպէ անձկութեամբ սպասում էր, թէ չլի սկսիլ արդեօք որ և մի ուրիշ տեղ այդպիսի դեռ չլսւած երգ, բայց, վերջապէս, համոզւեց, որ իր յոյսերը զուր են և հանդարտ կերպով քարշ եկաւ դէպի այն կողմը, որտեղից առաջուց լսել էր երգը։ Շուտով նա ցածր թփերի վրայ նկատեց սոխակի բոյնը, որի պատնդին կանգնած՝ նա պահպանում և մեղմ, հավիւ լսելի, ձայնով ծլւլացնում էր և նաիրիկ երգում, օրօրելով իր վոքրիկ ձագուկներին։ Զգուշութեամբ և երկչոտութեամբ, անլսելի կերպով, մօտ գնաց Տանջանքը տգեղ արտաքինով զարմանալի թռչնիկի բնիկին և մեղմ ու ազերսալի կերպով հշնջաց.

—Թռչնիկ, ո՜հ իմ հիանալի, քաղցրաձայն թռչնիկ, պարգևիր ինձ այդպիսի թովիչ ձայն, ինչպիսին քոնն է, որի հետ չի կարող համեմատւել որ և է մի ուրիշ երկրային հնչիւն։ Այն ժամանակ ես էլ կարող կըլինէի զարճացնել մարդկանց, որոնց ակամայ դժբախտացնում եմ և իմ սքանչելի երգերի հնչիւններով հարկադրել նրանց գէթ

*) Տես Տարագ № 8.

ժամանակաւոր մոռանալ իրանց բոլոր վշտերն ու թշուառութիւնները...

Տանջանքը լռեց, սպասելով որ պատասխան ստանայ, բայց մոխրագոյն թռչնիկը, իբր թէ չլսելով, հոգատար կերպով նայում էր դէպի իր թեթև բնիկի ներսը, ուր աղմկալի կերպով յուզուում էին մատաղ սոխակները։

—Ի՞նչի ես լռում, մի՛թէ չես կարող խնդիրս կատարել,—տխրութեամբ ասաց թշուառ աղջիկը, երեսը շրջելով դէպի փշաքաղած փետուրներով թռչնիկը, և հանդարտիկ լաց եղաւ։

—Ո՛հ, ոչ, ես կարող եմ այդ անել,—արագութեամբ և դժգոհ կերպով պատասխանեց սոխակը,—սակայն չեմ ասիլ, որովհետև իմ պարգևը քեզ համար՝ բացի վշտից՝ ոչ մի օգուտ չէր բերիլ, չիմար աղջիկ. դու ոչ մի այնպիսի բան չըպիտի ունենաս, որ կարողանայ գրաւել դէպի քեզ մարդկանց ուշադրութիւնը։ Եթէ դու ունենայիր որ և է գեղեցիկ ու ընտիր յատկութիւն, այն ժամանակ այնպէս անլսելի կերպով և երկչոտութեամբ չէիր մտնիլ մարդկանց մօտ, ինչպէս այժմ ես մտնում, և այնպէս աննկատելի ու հանդարտ կերպով չէիր հեռանալ, որպէս դու միշտ արել ես առաջ։ Եւ մարդիկ առաջւայ կարեկցութեամբ չէին ընդունիլ քեզ, իսկ շուտով քեզ բոլորովին չէին թողնի մտնել իրանց տունը։ Ահա ինչ հեռանքի կըբերէին, անկասկած, քո դիւթական երգերը, և ոչ թէ այնպէս կըլինէր, ինչպէս դու զուր կարծում ես։

Աւելի և աւելի էր հեռանում այդ տեղից տխրագին Տանջանքը և հասաւ, վերջապէս, մի այնպիսի վիթխարի անտառի, որի նմանը դեռ չէր տեսել իր ճարապարհորդութեան ժամանակ. որքան դիւթական ու չքնաղ էր ամեն բանայդ հրաշագեղ անտառում։ Հանդարտ առաջ էր շարժւում լռելի անցորդուհին և թեթև քայլերով, նա իր ոտքերը դնում էր կանաչափայտ ու թաւ մամուռի վրայ, որ շքեղ բարձերի նման դուրս էր եկել դարաւոր ծառերի տակից, որոնք տարածում էին իրանց շուրջը անուշահոտ ու խեժաւէտ բուրմունք։ Արեգակի պայծառ ճառագայթները տեղ-տեղ թափում էին իրանց շլացուցիչ լոյսը ծառերի կանաչ սաղարթի միջով և, խայտալով, դողում էին ճոխ մամուռի և ծաղիկների վրայ, իրանց շողշողուն փայլով ոսկեզօծելով ինչ որ արտասովոր ու անասելի գեղեցիկ բոյսերի տեղ-տեղ թառամած տերևներ։ Ամեն բան այդ անտառում չըլսւած ու անբրնակ գեղեցկութեան հրաշալիք էր, բայց այլ ևս երկար կանգ չ'առաւ վաստակած անցորդուհու ուշադրութիւնը։ Յոգնած չկնելով մի ծառի, Տանջանքը իր անուշադիր հայեացքը ձգեց անտառին, որ իր գեղեցկութեամբ սկզբից գարմացրել էր նրան, և հանդարտ կերպով ասաց, հազիւ շարժելով իր համարեա մոմեղէն շուրթերը.

—Վերջապէս, այժմ այլ ևս չըպիտի վախենամ մարդկանց հանդիպելուց, որովհետև այստեղ ինչպէս երևում է դեռ մարդկային ոտք չի կոխել... Այստեղ ես վստահութեամբ կարող եմ երկար մնալ, որ նորից հաւաքեմ փոքրիկ ուժերս, որոնց կարիքը ես աւելի և աւելի եմ զգում ..

Չէնց այդ րոպէին արեգակի անհնազանդ ճառագայթներից մէկը ըմբոստ կերպով դուրս պրծաւ իր աւելի հանգիստ եղբայրների մի ամբողջ խուրձից, որոնք սիրով և հաճոյքով հետևում էին իրանց սիրեկան եղբօր զարմանալի արարքներին։ Բայց ահա նրանք զարմանքով նկատեցին, որ՝ սահելով ծառերի միջից՝ ճառագայթը չանկարծ կանգ առաւ, կարծես շփոթւած լինէր մի ինչ որ բանից, և, անսովոր կերպով լրջանալով, սկսեց ուշադրութեամբ նայել՝ մնացած եղբայրների համար դեռ անտեսանելի՝ մի ինչ որ առարկայի վրայ. դա Տանջանքի խոշոր ու սևորակ աչքերն էին, որոնք իրանց տրտմութեամբ ապշեցրին անհոգ մանուկ-ճառագայթին։ Զարմացած նրանց մահաչունչ տխրութիւնից՝ հետաքրքիր ճառագայթն աննկատելի և արագ կերպով թափանցեց այդ աչքերի ներսը և մի ակնթարթում լուսաւորեց նրանց իր շողազարդ լուսով։ Յետոյ նոյն արագութեամբ նա ցած իջաւ, ներս սպրդեց Տանջանքի կիսամեռ կուրծքը և հարևանցի կերպով թեթև դիպաւ նրա սրտին... Եւ հրաշագեղ ու խորհրդաւոր անտառը ամբողջովին միաժամանակ պայծառ ու հմայիչ լոյս նկատեց նրա դէմքի վրայ և ցնցւեց զարմանքից ու հըրճւանքից։ Սակայն ինքը, Տանջանքը, չըգիտէր, որ մի աննկնթարթում գեղեցկացել է և միայն զարմացած զգում էր արեգակի տաք ճառագայթի դողդոջը իր թրթռուն կրծքի մէջ.

—Ո՛հ, իմ սիրելի, հրաշագեղ անտառ, բացականչեց նա հիացած,—աղաչում եմ քեզ, ընդմիշտ տուր ինձ քո հազարաւոր ճառագայթներից գէթ մէկը, որ ես էլ կարողանամ, վերջապէս, դառնալ ուրախ և աշխոյժ!...

Իսկոյն մեռելային լռութիւն տիրեց անտառում. ծառերը իրանց կատարները տխրութեամբ ցած իջեցրին, իսկ ոմանք նրանցից սկսեցին նշանացի նայել մէմեանց վրայ, չիմանալով թէ ինչ պիտի անեն։ Ո՛չ մէկը կանաչ հսկաներից չէր վճռում պատասխան տալ խեղճ անցորդուհուն, լաւ իմանալով, որ իր տւած պատասխանը անխուսափելի կերպով պիտի վշտացնէ նրան։ Այդ միջոցին կայտառ ճառագայթը, նկատելով շուրջը տիրած ընդհանուր յուզմունքը, շտապով դուրս վազեց նրա՝ շողշողուն լուսով կենդանացած՝ աչքերից, խայտալով հպեց մի փայլուն մողէսի և իսկոյն անհետացաւ բարձր ու կանաչ խոտի մէջ...

—Ո՛հ, իմ խեղճ երեխայ,—ասաց, վերջապէս, հինաւուրց կաղնին,—մի՛ խնդրիր այնպիսի բան, որ չի կարող օգուտ բերել քեզ. բաւական է միայն մի ճառագայթ, որ քեզ չափազանց աշխոյժ ու գեղեցիկ դարձնէ։ Այն ժամանակ մարդիկ կըսկսէին չափազանց յաճախ կանչել քեզ իրանց մօտ, և այդ պատճառով մարդկային ուժերից վեր կըչարչարւէին նրանք։ Դու ընդմիշտ պիտի մնաս առանց ջերմութեան և առանց փայլի...

Մի թափանցիկ մեծ արցունք հանդարտ ընկաւ Տանջանքի մերկ ոտքերին և այնտեղից կամաց գլորւեց ու ընկաւ դարաւոր կաղնու՝ հողի երեսին խիտ հիւսւած՝ արմատների վրայ։ Ծառը իսկոյն ուղարկեց նրա համար իր քաղցր բուրմունքը և մեղմ շշնջալով, իր երախտիքը յայտնեց այդ մի կաթիլ ցօղի պատճառով... Այստեղ էլ մերժում ստանալով, չափազանց ուղևորը չուզեց այլ ևս մնալ անտառում և արցունք թափելով, շարունակեց ճանապարհը։ Մի քիչ յետոյ նա հասաւ մի անյայտ տեղ, ուր տիրում էր անսովոր խաղաղութիւն և հանգստութիւն, Այստեղ չէր լսւում ոչ մի շարժում, և բոլորը կարծես քնել էին կախարդական, խորհրդաւոր քնով։ Վաստակաբեկ Տանջանքը նստեց փափուկ ու թաւ խոտի վրայ և ինքն էլ փորձեց

գէթ մի փոքր ննջելու։ Բայց նա չըկարողացաւ քնել, չընայելով որ շատ յարմար էր տեղաւորուել ծառերի հովանու տակ, և շուրջը, ջրի երեսին, անցնում էին հազարավարդենու խիտ շարքերը, իսկ ջրի խորքից դուրս էին լողում ջրային շուշանների և ուրիշ նրանց նման ծաղիկների սեգ գլուխները։ Մի հազիւ նկատելի կապտագոյն աստղ անշարժ կանգնած էր ջրի խորհրդաւոր մակերևոյթի վրայով. Տանջանքը հանդարտութեամբ ջրի մէջ ընկղմեց իր բարակ, դիւրաբեկ ձեռը, որ չետոյ կամաց քսեց երեսին։ Նոյն րոպէին անլսելի կերպով նրա մօտով անցաւ Երեկոն, որ ժպտալով շշնջաց.

—Հարի գիշեր! քնիր առանց երազների, ով մանուկ, գէթ ժամանակաւոր մոռացիր քո վշտերը!... Տանջանքը երկար լռիկ նայում էր հեռացող Երեկոյի ետևից և չետոյ, վշտագին հառաչելով, ասաց.

—Միայն մի անգամ մոռացայ ես իմ բոլոր վշտերն ու ցաւերը, երբ արեգակի ճառագայթը այն անտառում, խայտալով, թափանցեց իմ սիրտը, բայց դա անցաւ!›...

Այդ յիշողութիւնով դառնացած՝ անցորդուհին սկսեց մտախոհ կերպով նայել ջրին, որի մօտ բոլոր ժամանակ անշարժ ընկած էր, չկորցնելով գէթ մի ժամ քնելու յոյսը։ Լճի վրայից կամաց բարձրանում էր կենսատու հովը, և ջրի վրայ փռւած մշուշի մէջ, րոպէ առ րոպէ փոխարինելով մէկը միւսին, անվերջ շարքերով սլանում էին գեղանի աստւածուհիների արագաշարժ և պարող ուրւականները, անյայտ, բայց հրաշագեղ ջրային տարածութեան այդ մըշտակայ բնակչուհիները։ Իսկ Տանջանքը բոլոր ժամանակ նայում էր լճակի ականակիտ ջրին և չէր կարողանում իր հայեացքը մի ուրիշ կողմ դարձնել։ Եւ ահա նա տեսաւ մի ինչ որ բոսորաչին լոյսի՝ ջրի մէջ յանկարծ երևացած՝ ցոլքը, որ աւելի մեծ էր՝ քան երկնքի պայծառ աստղերը, և որը իր ճառագայթներով անսպասելի կերպով լուսաւորեց վրայ հասած գիշերւայ թանձր խաւարը, որ տիրել էր լճակին։ Այդ տարօրինակ լոյսով զարմացած՝ Տանջանքը հետաքրքրութեամբ գլուխը վեր բարձրացրեց և իսկոյն նկատեց, որ այդ անսովոր լոյսը դուրս էր գալիս մի ինչ որ տանէից, որ կանգնած էր լճի ափին և որ առաջուց չէր նկատել։ Այդ փոքրիկ տունը վերևից մինչև ներքև փաթաթւած էր ճոխ պատուտակի մոյգկանաչ տերևներով, իսկ լճի մէջ ցոլացող բոսորաչին լոյսը յայտնապէս թափւում էր բաց պատուհանից։

—Ա՛յս ինչ հրաշք է,—զարմացած շշնջաց անցորդուհի աղջիկը,—ես, ակներև է, դեռ ոչ մի անգամ չեմ մտել այդտեղ...

Անլսելի կերպով մօտեցաւ պատուհանին և տեսաւ իրանից ոչ հեռու նստած կնոջը, որ թէև երիտասարդ չէր, բայց զարմանալի գրաւիչ էր և նոյն իսկ գուրկ չէր մի տեսակ ինքնուրոյն գեղեցկութիւնից։ Անծանօթ կնոջ ձիւնի նման սպիտակ մազերը կիսածածկւած էին կտաւէ ծածկոցով, որի ծայրը հասնում էր յատակին։ Այդ թերևս ծածկոցի տակից երևում էր մի տեսակ չափազանց յարմարաւոր, լայն և կակուղ շոր, որ անկարելի էր հագուստ անւանել, որովհետև ոչ մի որոշ ձև չունէր։ Անծանօթ կինը վստահութեամբ ու եռանդով ինչ որ բան էր գրում մի մեծ, կոճկաւոր գրքի մէջ, որ բաց արած՝ ընկած էր սեղանի վրայ, հէնց այն պատուհանի մօտ, որից բոսորագոյն լոյսի շողքը ընկնում էր լճակին։ Հասակաւոր կնոջ խիտ յօնքերի մէջ տեղը ընկած կնճիռը անյայտ գրողի բնաւորութեան խիստ վճռականութիւնն էր վկայում։ Բայց միևնոյն ժամանակ բուն կանացի համեստութիւնը անկասկած ապացուցւում էր այն ուրիշ տեսակի գծերով, որ ընկած էին նրա համակրելի բերանի շուրջը։ Տանջանքը երկար խորասուզւած զննում էր անծանօթ կնոջ հետաքրքիր դէմքը, որը, ինչպէս երևում էր, նոյն իսկ բոլորովին չէր նկատում նրա ներկայութիւնը։

Յանկարծ հասակաւոր կնոջ հրաշագեղ աչքերի հայեացքը կամաց պոկւեց գրքից, և միևնոյն ժամանակ սենեակից լսւեց մի քաղցրահնչիւն, երաժշտական ձայն.

—Դէհ, շուտով ներս մտիր, զաւակս,—ժպտալով ասաց անծանօթ կինը,—բաւական է որքան կանգնեցիր այդտեղ, պատուհանի տակ։ Ես վաղուց սպասում եմ քեզ իմ միայնիկ բնակարանում...

Զարմացած Տանջանքը անվճռականութեամբ մտաւ այն սենեակը, ուր գտնւում էր հրաշագեղ կինը, և կանգնեց դրան մօտ, չըվստահանալով առաջ գնալ, բայց նոյն րոպէին չանկարծ նա իրան զգաց սիրալիր տանտիրուհու ջերմագին գրկում, որ նրան դրել էր իր ծնկների վրայ և, բազմաթիւ քաղցր, մայրական համբոյրներ տալով, ասում էր նրան.

—Իմ թանկագին Տանջանք, դու ինքդ պիտի անպատճառ գտնէիր ինձ։ Ես չէի կարող որոնել քեզ, որովհետև ոչ ոքի մօտ չեմ գնում՝ առանց նախօրօք հրաւիրւած լինելու։ Ես կոչւում եմ Մայր-Համբերութիւն, միշտ այստեղ նստած եմ լինում և, յաւիտեան արթուն մնալով, ամեն մի բանի ականջ եմ գնում։ Իմ հրաշալի լճակը անդադաճան կերպով բերում է ինձ մօտ բոլոր այն մարդկանց ձայները, որոնք որ և է մի տեղ կանչում են ինձ, ցաճախ հնազանդելով քո կոչին, եկել եմ քո ետևից, բայց, բարեբախտաբար, ոչ ամեն ժամանակ...

Վերջին խօսքերի ժամանակ Համբերութեան մտածող ճակատի կնճիռը խորացաւ, իսկ Տանջանքը իր գլխիկը վստահաբար իջեցրեց նրա բարի և քնքոյշ կրծքի վրայ։

—Ո՜հ, իմ սիրելի Մայր, այլևս մենակ չըթողնես ինձ և միշտ ու ամեն տեղ ինձ հետ եղիր, ամօթխածութեամբ ասաց գգւանքից քաշւերւած աղջիկը, իր սևորակ, աչքերով նայելով Համբերութեան խաղաղ ու պայծառ աչերին։

Բայց վերջինս իր փափուկ ձեռքով քնքշաբար շոյեց նրա թեքւած գլուխը և հանդարտ, բայց առանց փոքրիկ վարանմունքի անգամ, վճռակտնօրէն ասաց.

—Ո՛չ, զաւակս, դու անկարելի բան ես խնդրում։ Ես կըգամ միայն այն ժամանակ, երբ ինձ կըկանչեն, ուրիշ կերպ չի լինիլ... Իսկ եթէ դու երբ և է յոգնես, իրաքանչիւր անգամ, առանց քաշւելու, արի ինձ մօտ և հանգստացիր իմ կրծքի վրայ... Իմացիր, զաւակս, որ ես յաւիտեան պիտի եռանդով գրեմ կենաց Գիրքը, և հէնց այդ բանը միայն մեծ հոգս ու աշխատանք է պահանջում...

Փոքրիկ ողորմելի Տանջանքը այդ ամբողջ գիշերը անցկացրեց Մայր-Համբերութեան տանը և միայն առաւօտեան ակամայ դուրս գնաց այդտեղից։ Ամբողջ ճանապարհը, որով անցնում էր նա, ինչպէս միշտ հունձի ժամանակ, ծածկւած էր կանաչով և բազմատեսակ ու գեղեցիկ

անթիւ ծաղիկներով։ Տանջանքը վշտագին նայեց վայրի խաշխաշին և հանդարտ շշնջաց.

—Ո՜հ, իմ խղճուկ, գեղեցիկ ծաղիկներ! Այժմ դուք պերճօրէն ծաղկում և զարթագին բացւում էք օրհնեալ արեգակի կենսատու ճառագայթների տակ, դէպի որը հրճւանքով բարձրացնում էք բերկրանքից դողդողացող ձեր ծիրանագեղ գլխիկները, բայց ձեր մտքովն անգամ չի անցնում, որ շատ կարելի է, հէնց այսօր պիտի հնձէք խոտի հետ միասին...

Հազիւ վերջացնելով այդ խօսքերը, Տանջանքը պատահաբար նայեց դէպի մի կողմը և յանկարծ իրանից մի քիչ հեռու, զարմանքով տեսաւ մի թարմ ու ծաղկափթիթ աղջիկ, որ միայնակ կանգնած էր ահագին կանաչ մարգագետնի մէջ։ Սակայն գեղեցկուհին չէր կանգած առանց գործի, այլ վստահ ու առողջ ձեռքերով անընդհատ հընձում էր բարձր խոտը։ Նա այնպէս շնորհալի և արագ էր հնձում, որ հազիւ թէ արագութեամբ ու աջողութեամբ կարողանային նրան յաղթել երեք ամրակազմ ու առողջ տղամարդիկ։ Փրաջան աղջիկը, ձեռքին բռնած սուր գերանդին, նոյնպէս պատահաբար նայեց նրա տեսքով զմայլւած Տանջանքի կողմը և, նկատելով նրան, գրգռող ու զայրացնող ձևով բացականչեց բարձր և ուրախ ձայնով.

—Բարի լոյս, իմ հետաքրքիր լղարիկ! Բաւական է, որքան այդ ահագին ու թուխ աչքերդ անմիտ կերպով չռեցիր ինձ վրայ! Աւելի լաւ է, արի այստեղ և օգնիր ինձ աշխատելու! Ի՞նչու ես այդպէս ձեռքերդ ծալած՝ առանց գործի կանգնել ճանապարհի վրայ! Դէհ, վերցրու շուտով գերանդին,—լաւ է, որ երկու հատ էլ աւելի ունիմ! Դէհ, լղարիկ, շուտով սկսիր աշխատել. մի վախենալ, չես ընկնիլ, փոյթ չէ, որ դու այդպէս լղար ու թափանցիկ ես!...

Պատասխան չըստանալով, եռանդուն աղջիկը ինքն սկսեց այնպէս արագ վազել դէպի Տանջանքը, որ նրա փայլուն մազերը ալէծածան փուեցին ուսերի վրայ, իսկ չքնաղ, պայծառ ու կապոյտ աչքերը յանկարծ սկսեցին կայծեր արձակել ու վառւել, կարծես թէ ինքը արեգակն էր լցրել նրանց իր երկնային լոյսի ջերմագին ճառագայթներով։

—Բայց ո՞վ ես դու, որ քո հպյեացքը այդպիսի անհասկանալի անդկութիւն է արտայայտում,—յանկարծ հարցրեց շարած աղջիկը և իսկոյն վերջ տւեց իր կատակին, հէնց որ մօտիկից տեսաւ Տանջանքի մահաշունչ ու վշտագին աչքերը։

Իր նոր ծանօթի անունը իմանալուց յետոյ աղմի վայրկեանաչափ շփոթւեց ու ամօթահարւած կերպով հերթական գլուխը իջեցրեց կրծքին։ Բայց երկար չըտևեց այդ շփոթմունքը և նոյն վայրկեանին, շուտափոյթ կերպով ժողովելով մազերը և մի հաստ ծամ կազմելով, արագութեամբ ասաց ժպտալով.

—Յետոյ դրանից ինչ, իմ նազելի լղարիկ... Դու յաւիտեան վշտագին Տանջանքն ես, իսկ ես անխոնջ ու կենսուրախ Աշխատանքն եմ... Ամեն մէկս իր տեղը!...

Այս խօսքերն ասելով, ուրախ աղջիկը վերցրեց Տանջանքից իր ձեռքերի վրայ այնպէս հեշտութեամբ, ինչպէս մի փոքրիկ երեխայի, և ոստիւններով վազեց դէպի իր դաշտը, ճանապարհին կատակ անելով ու ծիծաղելով և պինդ համբուրելով իր նոր երկչոտ բարեկամուհու գունատ ու թափանցիկ թշիկները։

Տանջանքի բազմաչարչար դէմքի վրայով անցաւ կարմրութեան ստւերի նման մի բան և, իր դիւրաբեկ ձեռքերով քնքշաբար փարւելով մատաղ ու առողջ աղջկան, նա աղաչական ձայնով ասաց.

—Գնանք, իմ թանկագին, գնանք ինձ հետ! Ես համարեա երբէք չեմ կարողանում հանգստանալ, թէև շատ անգամ սաստիկ յոգնածութիւն եմ զգում։ Գնանք ինձ հետ, գնանք! Քեզ հետ, իմ թանկագին, այսպէս դժւար չեմ տանիլ իմ ծանր վիճակը!

—Ո՛չ, իմ դժբախտ քոյրիկ, ո՛չ—արագութեամբ բացականչեց աղջիկը, զգուշութեամբ վայր դնելով իր թեթև բեռը,—ո՛չ, իմ հարազատ, կրկնեց նա,—ես չեմ կարող քեզ հետ գալ։ Ես պէտք է գեշերները պինդ քնեմ, որ առաւօտները առողջ ու զւարթ վեր կենամ, և ո՛չ թէ անքնութիւնից մարմինս ուժասպառ անեմ քեզ նման։ Այն ինչ՝ եթէ գալու լինեմ քեզ հետ, այլ ևս չըպիտի կարողանամ քնել կամ ծիծաղել, տեսնելով քո՜ յաւէտ անձկալի աչքերը, որոնք անծանօթ են գիշերւայ կազդուրող հանգստութեան .. Ո՛չ, ո՛չ, առանց հարկաւոր գործի չեմ գալ քեզ հետ։ Բայց եթէ երբ և է ճշմարտապէս հարկաւոր լինիմ, և դու հեռւից կանչես ինձ, ես իսկոյն օգնութեան կըհասնեմ քեզ, իմ խեղճ աղջիկ։ Ես այն ժամանակ, ուր ուր էլ ասես, կըգամ քո ետևից, որպէս զի աշխոյժ ներշնչեմ մարդկանց թախծալի սրտերը, կենդանութիւն տամ նրանց յոգնած դէմքերին և նորից դարձնեմ նրանց առողջ և անխոնջ աշխատելու ընդունակ։ Միայն Աշխատանքն ու Համբերութիւնը կարող են ուղղել այն վնասը, որ Տանջանքը հասցնում է մարդկանց... Մնաս բարեաւ իմ փոքրիկ. մի խռովիր հոգիս քո անձկալի տեսքով, բայց միևնոյն ժամանակ չըմոռանաս կանչել ինձ, երբ իսկապէս հարկաւոր կըլինեմ քեզ։

Տանջանքը լուիկ կերպով գրկեց խոհական Աշխատանքին և հնազանդութեամբ նորից ճանապարհ ընկաւ այդ առաւօտ թափառելու անհուն, լայն աշխարհում։ Իսկ զւարթագին Աշխատանքն ու վճռական Համբերութիւնը հաստատ մնացին իրանց տւած խօսքին և նրա հաւատարիմ ու մշտակայ դաշնակիցները դառան։ Եւ սկսեցին այդ ժամանակից նրանք երեքով յաճախ հաւաքւել միասին ջրի մօտ գտնւող հրաշալի տնակում, որ միասին կարդան և գրեն կեանց Գիրքը։

Ջ. Տ.-Գ.

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՔԸ

III

Ինութեան մէջ բազմաթիւ երևոյթներ կան, որոնց դեռ ոչ ոք չէ հասկանում։ Ի հարկէ ներկայումս արդէն պարզած են շատ այնպիսի երևոյթներ, որոնց մեր նախնիները կամ բոլորովին չէին հասկանում կամ մութ էին ըմբռնում, կամ սխալ էին հասկանում։ Օրինակ մի ժամանակ ազգերը սարսափում էին պոչաւոր աստղեր տեսնելով, իսկ այժմ նրանց էութիւնը բացատրած է։ Ի հարկէ մեր ժամանակ էլ կան այնպիսի անբախտ մարդիկ, բազմաթիւ ողորմելի հարուստներ, որոնց սիրտն ու միտքը խաւար է, որոնք մէջքի ու փորի վրայ քարշ են տալիս իրանց գումարը, որպէս կրիան, այդ անբախտագոյն արարածը տանում է իր պատեանը։ Բայց այն ինչ որ մութ է սրանց համար, կատարելապէս լուսաբանուած է գիտնական աշխարհի համար...

Այնուամենայնիւ հէնց գիտնական աշխարհի համար էլ տակաւին մութ հարցեր շատ կան... Միայն հասակաւոր մանուկները կարող են աչ ու ձախ աղաղակել, թէ իրանց համար ամեն բան պարզ է, որոշ է, հասկանալի է, թէ ուրեմն այլևս մտատանջութիւն չըկայ, ճշմարտութեան ծարաւ չըկայ, ամեն ինչ ապացուցած է... Հարկաւոր է միայն ուրիշներին սովորեցնել (իբր թէ իրանք արդէն սովորած են)։ Մենք ուրիշ անգամ ակնարկել ենք, իսկ այժմ դրականապէս պնդում ենք, որ անբարոյականութիւնը սկսում է արմատ բըռնել այն վայրկենին, երբ միտքը կանգ է առնում... մարդը սկսում է ուռչել օձից թունաւորուածի նման։ Այդպիսի տարաբախտ վայրկեաններ ունենում են անհատները, ունենում են ազգերը, բայց չէ ունենում մարդկութիւնը, որովհետև եթէ վերջինս մտաւորապէս կանգ առնէ, այնուհետև մնաս բարով լուսաւորութիւն, մնաս բարով կեանք...

Մութ հարցերը լիքն են, թէ բնական և թէ փիլիսոփայական գիտութիւնների մէջ, օրինակ նիւթի և ոյժի հարցը... Տիեզերքը նիւթից է բաղկացած, թէ, ոյժից։ Դարերի ընթացքում գիտնականները վիճաբանեցին, դասախօսութիւններ կարդացուեցան, բազմաթիւ գրքեր հրատարակուեցին հարցը լուծելու համար... Գիտնական միութիւնները, փիլիսոփայական դպրոցները իրար դէմ մաքառեցին... Մէկը ոյժն էր պաշտպանում, միւսը նիւթը, երրորդը պնդում էր թէ ոյժն էլ գոյութիւն ունի, իսկ չորրորդը հաւատացնում էր, թէ ոչ նիւթը գոյութիւն ունի, ոչ էլ ոյժը... միայն ինքը (իր եսը) գոյութիւն ունի, և ամեն բան իրան միայն թւում է...

Բայց և այնպէս հարցը դեռ մնում է անլուծելի, որովհետև ոչ ոք չէ կարողանում նախ որոշել, թէ ինչ զանազանութիւն կայ նիւթի և ոյժի մէջ։ Մի՞թէ նիւթը ոյժ չէ, իսկ ոյժը՝ նիւթ...

Սակայն մարդկային միտքը կանգ չի առնիլ, կըլուծէ վերջապէս և այդ խնդիրը։ Ով գաղափար ունի մարդկային մտքի զօրութեան մասին, նա կը հասկանայ մեր ասածը... միտքը սահման չունի։

***

Սիրոյ և ամուսնութեան խնդիրը նոյնպէս տակաւին վերջնականապէս պարզած չէ, թէև շատ է քննուած, շատ է խօսուած, բայց մարդիկ ի զուր չեն քննել, ի զուր չեն խօսել։ Խընդիրը թէև դեռ մութ կէտեր շատ ունի, բայց նա օրէց օր աւելի և աւելի լուսաբանւում է։ Անհերքելի փաստ է արդէն, որ առանց սիրոյ ամուսնական կեանքը կեանք չէ, այլ դժոխք է։ Ուստի մենք բացարձակ կերպով պահանջում ենք, որ երբ տղայի և աղջկայ մէջ փոխադարձ սէր չըկայ, նրանք չ'ամուսնանան... Իսկ եթէ նրանք ինչոր հաշիւներ ունենալով որոշում են ամուսնանալ, եկեղեցին պիտի չըպսակէ նրանց։ Ի հարկէ, պսակելու ժամանակ հարցնում է տղայի և աղջկայ կամքը. բայց հաստատ կարելի է ասել, որ սրանք յայտնելով իրանց համաձայնութիւնը, սէրը, շատ անգամ կամ ուղղակի ստախօսում են, կամ իրանք էլ չըգիտեն՝ ինչ են անում։

Այստեղ հարց է ծագում, թէ ինչումն է կայանում իսկական սէրը և թէ ինչպէս պէտք է անել, որ ամուսնական կեանքը հէնց սկզբից հիմնուած լինի սիրոյ վրայ։ Ասում են թէ վերջինս դժուար է իրագործել, թէև ցանկալի է... Բայց մենք դժուարութիւնները պիտի քննենք։

***

Ի՞նչ է սէրը։

Ամենքը գիտեն, որ քարը բաղկացած է մանրիկ փոշիներից։ Մենք կարող ենք ծեծել քարը և ստանալ նրանից անթիւ հատիկներ։ Բայց թէ՛ չուս այդ հատիկները մինչև մեր ծեծելը իրարից չէին հեռանում։ Որովհետև նրանք պահում էին միմեանց։ Փոշու հատիկները քարշում են միմեանց, որպէս մագնիսը և ասեղը։ Այդ փոխադարձ ձգողականութիւնը տարածած է ամբողջ տիեզերքի մէջ։ Եթէ վերև նետած գնդակը չէ շրջունակում երկինք բարձրանալ, այլ յետ է գառնում և ընկնում երկրի վրայ, այդ նրանից է, որ երկիրը քաշում է գնդակը դէպի իրան։ Ինքը երկիրը, թէև մի ժամանակ արեգակի մասն է կազմել, չէ կարողանում շատ հեռանալ արեգակից։ Երկնային բոլոր մարմինները (աստղերը, մոլորակները) փոխադարձաբար քարշում են միմեանց թէևից, որպէս եալի խաղացող աղջիկների խումբը։ Եթէ չըլինէր այդ ընդհանրական ձգողականութիւնը, տիեզերքը կըփոշիանար, կըցրուէր, կ'անհետանար անսահման տարածութեան մէջ, որպէս ծուխը օդի մէջ։

Կենդանական աշխարհումն էլ գոյութիւն ունի ինչ որ կենսական ձգողականութիւն։ Կեանքը կեանք է որոնում, ոյժը կամենում է գործադրել, եռանդը կամենում է ստեղծել, արդիւնք առաջացնել... Ի՞նչն է սրանց բոլորի պատճառը. դեռ ոչ ոք չըգիտէ, գիտութիւնը դեռ չէ կարողանում բացատրել։ Բայց եղելութիւնը մնում է եղելութիւն։ Մարդկային սրտի մէջ միշտ ինչ որ ձգտում գոյութիւն ունի դէպի իր նմանը, դէպի մարդը... Ազգը ազգի դէմ կռւում է, ցեղը ցեղին բնաջինջ է անում... Սակայն այդ արիւնահեղ երևոյթները շատ անգամ էլ անգիտակցաբար։ Բայց պսպղուն պողպատը թշնամու թոքերից դեռ դուրս չըհանած՝ սպանողը զգում է իր սրտի խորքում ինչ որ բողոք դէպի իր գործը։ Որքան էլ նեղ անձնասիրական սոփեստութիւնները կուրացնեն մարդուն, այնուամենայնիւ նրա սիրտը վերջնականապէս չէ ցամաքում իր ընկերակցի հա-

մար... Իսկ Ադամի որդիները ամենքն էլ ընկերակիցներ են։

Այստեղ պէտք է որոնել սերոյ հիմքը, այստեղից է սկիզբ առնում զգացողական ճառագայթը, որ յետոյ անցնելով կենսական կանթեղի (պրիզմայի) միջով, ցոլանում է ամեն կողմը և արևի ճառագայթների նման բազմատեսակ գոյներ է ցուցնում, ծիածան է ստեղծում... Այդ ծիածանի գոյներն են կազմում ծնողական, որդիական, ընկերական, հայրենիքի, բարեկամի, ազգակցական և վերջապէս իր ընտրածի սէրը։ Թողնելով մի կողմ բոլորը, մենք կըխօսենք այժմ վերջինի, այսինքն հակառակ սեռերի մէջ ծագող փոխադարձ սիրոյ մասին։

Ս. Թ.

Քննադատական

Դրականութիւն եւ մտաւոր

ՄԵՐ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻՒՆ

Նոր-Դարի հրապարակախօսութիւնը

Աւելի որոշ և կարուկ գրւած է «Ընորհաւոր նոր տարի» յօդւածը (№1)։

„Ես եթէ այդ գործը մարդկային յառաջադիմութեան գործն է—ասում է Նոր-Դարի աշխատակից Մ. Ֆ.—եթէ նա ձեռնարկած է մարդու օգուտ բերելու նպատակով, եթէ նա անկեղծ է—ինչու ամենքը չըմիանան միահամուռ ոյժերով նոր շէնքը հիմնելու.. Ինչու գործել բաժանբաժան, չլատաճ ոյժերով, միմեանց առաջն առնելով, միմեանց խանգարելով, միմեանց վնասելով...

Նոյն միտքը աւելի էլ պարզաբանում է «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» առաջնորդողում (№ 2), որ գրել է մի ուրիշ աշխատակից Պ. Չ.

„Նա սարկութեան տեղ հաւասարութիւն քարոզեց, բռնակալութեան տեղ—եղբայրսիրութիւն, գոռոզ անձնասիրութեան տեղ—հեզութիւն... ուսոյն և չանուն աշխարհակալ Քրիստոսի ինչ կարող ենք պահանջել, եթէ ոչ ծննդեան մեծ եւ սքանչելի խորհրդի գործնական մարմնացումը“։

Երկու յօդւածներ խօսում են բարեգործութեան մասին։

„Համոզմունքով, գիտակցութեամբ, բարւոքիւն անելու նպատակով միայն արած բարեգործութիւնը եթէ զօրգանալու լինէր մեր մէջ, որ ցանկալին է... այն ժամանակ միայն կարող էր մեր ժողովուրդներին բաղդաւոր համարել“ (№ 207)։ „Եթէ մեծացող սերունդը բարոյական կրթութիւն ստանայ և սովորի բարեգործութիւն անել միմիայն բարեգործութիւն անելու նպատակով, այն ժամանակ մեր երկրի բոլոր քաղաքներում բարեգործութիւնը կազմակերպւած կըլինի, փողոցները աղքատներով լիքը չեն լինիլ և ամօթխած՝ ճշմարիտ օգնութեան կարօտները տանը քաղցից չեն մեռնիլ“ (№ 219)։

Այդ բոլորը ուղիղ է, թէև մի առանձին նորութիւն չէ ներկայացնում, սակայն «Կատկելու սովորութիւնը հայերի մէջ» յօդւածը մենք չենք կարող հաւանել։ Նոր-Դարին ուրախացնում է այդ հանգամանքը, որ շատ հայեր, որոնք ամբողջ կեանքում ոչ մի հասարակաց գործի չեն խառնըւում, մեռնելու ժամանակ առատ կտակներ են անում։

„Ես ով կարող է իմանալ—ասում է Նոր-Դարը սքանչանալով թէ արտաքուստ անտաշ, ամենօրեայ կեանքի պայմաններում սառած (ինչց ցաւն էլ այդ է) և անտարբեր երևացող (ոչ թէ երեւացող, այլ իսկապէս անտարբեր) հայ մարդու, հայ վաճառականի սրտի խորքում ինչպիսի քնած, մաքուր և բարի զգացումներ են թագնւած“...

Նոր-Դարը այդ եզրակացնում է նրանից, որ նմանօրինակ մի սառած մարդը մեռնելուց յետոյ կտակ է անում հասարակութեան օգտին։ Իսկ մեզ այդ շատ ցաւացնում է։ Մեր կարծիքով կտակելու սովորութիւնը մի այլանդակ բան է։ Դուք կէս ժամից յետոյ պիտի մեռնէք և ձեր ունեցած-չունեցածը ուրիշին է մնալու և հէնց արդէն ուրիշինն է, քանի որ դուք օգտւել չէք կարողանում... Չեմ ասում էլ իրաւունք ունէք այդ հարըստութեան վրայ, որ ձեզանից յետոյ եկողները գուցէ աւելի օգտակար կերպով կըգործադրեն, քան թէ պիտի գործադրւի ձեր կտակի գօրութեամբ։ Եթէ դուք իսկապէս բարի մարդ էիք, եթէ իսկապէս ձեր սրտի վրայ ծանրացած էր հասարակութեան շահը, ինչու՞ բաջութիւն չունեցաք ձեր կեանքի ընթացքում, ձեր խելքով գործադրել նրան բարի նպատակների համար։ Դուք սառնասիրտ կերպով լսում էք, թէ ինչպէս տանջւում է խեղճ ուսանողը, ինչպէս տառապում է ընտանիքի տէր հայ գրողը, և դուք անտարբեր էք մնում։ Իսկ երբ մեռնելու ժամը հասնում է, միայն այն ժամանակ էք մտածում ձեր դիպածների մասին... Այստեղ էլ վաճառականութիւն... Տալիս էք ձեր փողի մի մասը, որպէս զի հանդերձեալ կեանքում ձեր անհանգիստ խիղճը հանդստութիւն գտնէ. դա առուտուր է... Պէտք չեն մեզ այդպիսի կտակները... Ով ատում է մամոնան, թող ապացուցէ այդ իր կեանքի ընթացքում, ով է նրա ձեռները կապել։ Մենք համոզւած ենք, թէ որքան մի հասարակութիւն բարոյապէս բարձրանայ, այնքան կրքչանայ կտակների թիւը, որովհետև առաջ քան մահուան ժամի հասնելը, արդէն լուրաքանչիւրը գործադրած կըլինի իր կտակը։

Ապա հետևեալ երեք առաջնորդողներով Նոր-Դարը դանգատւում է մեր ներկայ կեանքից։

„Մեր կեանքը մանրացել է. նոր սերունդը ոչ թէ միայն ֆիզիքապէս է մանրացել, այլ և հոգեպէս, մտաւորապէս։ Լուսաւորութիւնը իր ծաւալով է աչքի ընկնում, իսկ ոգեկութեան կողմից աննշան է (№ 9)“։

Որտեղից է դուրս բերում պ. Ս. Ս. այդ տխուր եզրակացութիւնները։

„Առաջ Թիֆլիսում մի Յակոբ վարժապետ, մի Կարապետ վարժապետ իրանց չնչին պիտութեան պաշարով մեծ յարգանք էին վայելում և դէպի նրանց պատկառանքով էին վերաբերւում, որովհետև հասարակութիւնը շատ էր յարգում գիտութիւնը (?) և այդ վարժապետներին գիտնական էր ճանաչում (ա՜ւ. այդ ուրիշ բան է)։ Իսկ այժմ, երբ լուսաւորութիւնն ընդհանրացել է... պիտութիւնը, բարձր ուսումը, բարձր տաղանդը (?) գին չունին“։

Իսկ մենք բոլորովին ուրիշ կերպ ենք հասկանում բանը։ Կար ժամանակ, որ մեր երկրում ամենքը զարմանում էին, հիանում էին, երբ մէկ ընտանիքում մի հասարակ լամպ կամ ինքնաեռ էին տեսնում։ Մարկոսը Կիրակոսին աշխոյժով պատմում էր, թէ ինչպէս Մարտիրոսի հօրեղբօր սպղկայ ամուսնի եղբօր որդին Մակարիայից մի լամպ է բերել և յուստանում էր մի օր նրան տանել տեսնելու։ Իսկ այսօր յետին բանուորի տանն էլ մի քանի հատ լամպեր կան, որոնցով ոչ ոք չէ հիանում։ Ձեր Կարապետ վարժապետի չնչին գիտութիւնը յարգել են, որովհետև երբ սրանք Նարեկից կամ Սաղմոսից մի վկայութիւն էին բերում, ամենքի բերանը բաց էր մնում, քանի որ իրանք բազմապատկութեան աղիւսակը) կլատ-պատ էին իմանում։ Իսկ այսօր, երբ վերջին երկտասարդը ֆիզիկայից տեղեկութիւն ունի, փիլիսոփայութիւնից է խօսում, համլետ է տեսել բեմի վրայ, կամենում է որ սրանք այժմ գարձեալ հիանան

«Պատրպակերցեր»

Դէպի մեծատարտութիւնը դուռը

Փետրուարի 24-ին Մոսկուայ մօտ եղած մեծատարտութեան առիթով

ձեր Կարապետ վարժապետներով... Ո՛չ, պարոններ, մարդիկ միշտ հիանում են, ի սրտէ յարգում են այն անհատներին, որոնք ամբողջ գլխով բարձր են կանգնած։ Եօթանասնական թուականներին մեր հայ ժողովուրդը կարող էր հիանալ մի Սպանդարեանով, մի Յովհաննիսեանով, իսկ այժմ մեր գաւառական երիտասարդութիւնը յիշեալների հետ հաւասար մակերևոյթի վրայ է կանգնած։ Ինչպէս առաջնորդները, նոյնպէս և առաջնորդուողները արդէն գիտեն թէ դպրոցը օգտակար է, գրականութիւնն անհրաժեշտ է, թատրոնը լաւ բան է... Իսկ գիտնական և հասարակական խընդիրների նորագոյն մշակութիւններից, մտքի թարմ ելևէջներից, տեղեկութիւն չունին ոչ ժողովուրդը, ոչ երիտասարդութիւնը և ոչ էլ նրա հիւթասպառ հրապարակախօսները։ Վերջիններս տասնուիններորդ դարի րուտինի մէջ կաշկանդուած են, որպէս շերամի որդը ինքնահիւս բոժոժի մէջ... Մինչդեռ արդէն քսաներորդ դարն է սկսւում... Նոր խօսք է հարկաւոր, նոր ձայն, նոր մուզիկա։ Եւ երբ այդ ձայները կըհնչեն, ժողովուրդը, երիտասարդութիւնը վիրաւորուած ինքնասիրութեամբ նախ կ'արհամարհեն, ապա կըհալածեն, բայց վերջապէս կ'ըմբըռնեն... Եւ կըխոնարհուեն նոր ձայների առաջ, որպէս տասն երեց եղբայրները խոնարհուեցին կրտսեր Յովսէփի առաջ... Իսկ Յովսէփները թոյլ չեն տալ ծունկ չոքելու, կըգրկեն և կըբարձրացնեն իրանց յետ մնացած եղբայրներին, կըսնուցանեն նրանց...

«Խորհրդածութիւններ» յօդուածը (№ 17) գանգատւում է որ

„Հայոց մէջ ոչ գովաբանութեան, ոչ էլ վատաբանութեան սահման կայ։ Մէկին կամ երկինքն են տանում, անսահման փառաբանում կամ դժոխքն են իջեցնում, անսահման վատաբանում“։

Երկար դէս ու դէն ընկնելուց յետոյ յօդուածը վերջանում է այն եզրակացութեամբ թէ

„Չէ կարելի խղճալ ամենամեծ աւազակին, ամենալիրբ գողին—պատւի գողին“։

Արի ու բան հասկացիր, ինչով է սկսում և ինչով է վերջացնում։ Ընթերցողը շւարած է մնում, թէ ինչումն է խնդիրը. ինչ գովաբանութիւն, ինչ պատւի գող, ինչ մածուն... Ի դէպ է ասել, որ Նոր-Դարի առաջնորդուողները շատ անգամ զուրկ են լինում օրգանական կազմութիւնից։ Յօդուածը պիտի այնպէս գրւած լինի, որ նրա բառերը միմեանց լրացնեն, որպէս մեր մարմնի ոսկորները, արիւնը, նեարդները... Ուրիշ խօսքով, յօդուածը պիտի ծառին նմանէ, որոշ արմատով, բունով, ճիւղերով, տերևներով... Իսկ Նոր-Դարի առաջնորդուողներից շատերը դիզած ցախի (ճախի) են նմանում, որոնց մէջ շիտակ փայտեր էլ կան, ծուռերն էլ և ամեն տեսակն էլ խառնիխուռն։

Վերջապէս սոյն դասակարգին մենք միացնում ենք «Պարսից երկիրը» յօդուածը (№ 61), որովհետև սա միայն կիսով չափ է քաղաքական։ Սկզբից հեղինակը գանգատւում է, որ

„Պառաւական խրատներով մեր մի կարգ հրապարակախօսները շատ առաջ էլ, հիմա էլ կուռւում են մոդի դէմ (իսկ Նոր Դարը ինչ միջոցներով է կուռւում), իբրև մի չարիքի դէմ“...

Մոդի մասին բաւական ընդարձակ խօսելուց յետոյ յանկարծ յօդուածագիրը քնից զարթնում է և յայտնում, թէ ինքը ուզում է Պարսկաստանի մասին խօսել։ Ասես թէ ինչ կապ ունի Պարսից երկիրը մեր մէջ տարածւող մոդի հետ։ Բայց Նոր-Դարը կապում է, թէև խիստ ջինովի կերպով, որպէսզի առանց այն էլ ձգձգւած առաջնորդուողները աւելի և երկարանան։ Կարծես թէ չէր կարելի մոդի խընդիրը առանձին շօշափել։

Ս. ԹՈՒՄԱՅԵԱՆ

(Կըշարունակի)

ՓԵՏՐՒԱՐԻ 19

Մարդկային քաղաքակրթութեան նորագոյն պատմութեան մէջ չըկայ այնքան պայծառ փայլուն օր, քան 1861 թուականի փետրուարի 19-ը, որ ընդհանուր մարդկութեանն ընծայել է Ռուսաց հանգուցեալ Ազատարար Կայսր Ալէքսանդր II-ը։

Ֆրանսիան իւրաքանչիւր տարի յուլիսի 14-ին տօնում է իր ազատութեան տօնը, ազատութիւն, որ նա ձեռք բերաւ շատ թանգ գըլնով, արեան հեղեղներով, յեղափոխութեամբ, որի ժամանակ եղբայրը եղբօր արիւնն էր թափում, ուր կախաղաններն ու օւացիանեբի աղաղակները խառնւել էին միմեանց և առաջացրել մի սոսկալի քաոս։ Բայց 1861 թուի փետրուարի 19-ը այդ տեսակից չէ։ Այդ օրը մի վեհապետի քրիստոնէական զգացմունքը մի հրամանի միջոցով ազատութիւն տւաւ 100 միլիօն մարդկային արարածների, որոնք դարեր շարունակ, մինչև այդ օրը, դատապարտւած էին գրաստներ համարւելու և կրելու ստրուկ, ճորտ ամենանախատական անունը։

Այդ է ահաւասիկ պատճառը, որ ռուս ժողովուրդը իր հանգուցեալ սիրելի Կայսեր, դեռ կենդանի ժամանակ, Նրան տւաւ Ազատարար տիտղոսը և ամեն տարի փետրուարի 19-ին զմայլման արտասուքներն աչքերին յիշում է այդ մարդասէր և քրիստոնեայ Թագաւորին։

ԼՐԱԳՐՈՒԿՆ ԽՈՐՀՈՒԱՆԱՆՔՆԵՐ

Տաճկական մայրաքաղաքում «Բիւզանդիոն» թերթը լոյս տեսնելուց յետոյ, գտնւեցան մարդիկ, որոնք ձգտեցին նրա և նրա խըմբագիր-հրատարակիչ Բիւզանդ Քէչեանի անունը քաղաքացիականացնել Կովկասում։ Այդ ուրիշ կերպ չէր կարելի անել, եթէ ոչ վերադրելով դրանց այնպիսի յատկութիւններ, որպիսիք երբէք ունեցած չեն։

Մանաւանդ ս. Էջմիածնայ գանձարանից անյայտացած առասպելական 200,000 րուբլին, որ կապւած էր «Բիւզանդիոն» թերթի հետ, բաւական աղմուկ հանեց։

Երկար տարիներ բնակած լինելով Պոլսում և ծանօթ լինելով թէ Բիւզանդ Քէչեանին և թէ նրա ուղղութեան ու վարք ու

բարքի հետ, թոյլ տէք մի քանի խօսք ասել դրա մասին։

Բ. Քէչեանին ինչ անուն էլ տան, թերևս յարմարի, բացի հայ անունից, որ բացի իր գործակիցներից ոչ ոք չի տալիս նրան։ Ասացինք, որ նա լաւ հրապարակախօս է։ Հրապարակախօսութիւնը, որպէս և ճառախօսութիւնը պոլսեցիք ուրիշ կերպ են հասկանում։ Բայց իսկապէս բառախաղութիւնը հրապարակախօսութիւն չէ, ոչ էլ մեծ բան է ֆրանսիական թերթերից թարգմանած մտքերը հայացրած խմբագրականի տեղ դնելը։

Այդ է Բ. Քէչեանի հրապարակախօսութիւնը։

Բ. Քէչեանը Նազըմ-փաշայի մտերիմն էր, իսկ Պարտիզակցի Վահան վարդապետի («Լոյսի» խմբագիր-հրատարակիչ) գաղափարակիցը։

Եւ դա յայտնի փաստ է։

Բ. Քէչեանը վաղուց ձգտում էր «Արեւելքը» իր ձեռքը ձգել յայտնի շահերի ծառայեցնելու համար։ «Արեւելքի» վարչութիւնը այդ գիտնալով զգուշացաւ, իսկ Քէչեանը գաղտնի հալածանք սկսեց թէ «Արեւելքի» և թէ Եուսուֆեան եղբայրների դէմ։ Կողմնակի ճանապարհով սպառնական նամակների մասին շատերը գիտեն. կարծեմ գիտէ և Ս. Իզմիրեանը։

Ս. Բարթուղիմէոսի տեղապահութեան օրով, նրա մատուցած ուղերձի հրատարակութեան մէջ Բ. Քէչեանը բացարձակ մատնութիւն արեց, որին դիպուածով ես ներկայ գտնւեցայ։ Ահա այդ ստոր միջոցներով վերջապէս դադարեցնել տւեց «Արեւելքը» և այն կրիտիկական օրերում, երբ Հայի ստւերին գնդակ էին արձակում, Բ. Քէչեանը «Բիւզանդիոն» հրատարակելու արտօնութիւն ստացաւ, որն այժմ իրան է պատկանում և իր ուղղութեան։ Ս. Իզմիրլեանի օրով նա հասաւ իր կոչման բարձրութեան, իսկ Օրմանեանի օրով նա ոչ այս է և ոչ այն է, որովհետև ինքը ս. Օրմանեանը երեքուն բնաւորութեան տէր մի հոգևորական է և աւելի հակւած դէպի իր nrrանը։

Այս բոլոր շրջաններով անցել է Հայր Երիցեանը, պահելով իր ինքնուրոյնութիւնը, իր սկզբունքների անկախութիւնը։ Որ նա որոշ խարակտերի, որոշ նկարագրի տէր անձն է,—այդ նա ցոյց է տւել թէ իր պաշտօններում և թէ մասնաւոր կեանքի մէջ։

Ս. Իզմիրլեանը ասել է որ՝ *«Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքական գահի ապագայ միակ արժանաւորագոյն պատրիարքացուն՝ է Գէորգ ծ. վ. Երիցեան»*։

Այն ժամանակ, երբ Պոլսում եղբայրը եղբօր չէր հաւատում, երբ սէրը մի վերացական բան էր և երբ հասարակութիւնը յուսահատած՝ չգիտէր իր անելիքը,—Հայր Երիցեանը մայր եկեղեցու բեմի վրայից հաւատաց, յոյս և սէր էր քարոզում այնպիսի անկեղծ շեշտով, որ ասում էիր՝ նրա բերանով խօսում է Ինքը՝ Նախախնամութիւնը։

Սեպտեմբերի 17-ին Խաչվերացի տօնին Հայր Երիցեանն ասաց. *«Խաչը, որի նշանաբանն է սէր, լոյս և անծնելիրութիւն, յաղթանակ տարաւ ընդդէմ բարբարոս հեթանոսութեան»*... Իսկ փետրուարի 12-ին ս. Վարդանանց տօնի օրը, Բագւայ եկեղեցու բեմից քարոզելով բնորոշում էր. *«Քաղաքակրթութիւնը XV-րդ դարում յանձին հայի՝ կռիւ մղեց ընդդէմ խաւարի եւ բարբարոսութեան, ընդդէմ պարսից խաժամուժ զօրի»*... Եթէ այսօր էլ բարոյական, մտաւոր և հոգեկան խաւարը, տգիտութիւնը շատ անգամ յաղթա-

իրայիններէ շահերին ծառայում։

«Բիւզանդիոնի» ինչ թերթ լինելը պէտք է պոլսեցիներից հարցնել, իհարկէ ոչ բիւզանդիոնականներից, որ նազըմիանական կամ սրա նման մի բան կընշանակէ։

Բացարձակապէս չեմ կարող ասել առասպելական երկու հարիւր հազար րուբլու լուրը պ. Հ. Առաքելեանից, թէ ուրիշից է ըղխել, սակայն ճանաչելով Քէչեանին, նրա հոգին, նրա նպատակը, կարող եմ ասել, որ առանց Հ. Առաքելեանի կամ մի ուրիշի էլ այդ մարդն ընդունակ է ցեխ շպրտելու դէպի այն հաստատութիւնները, որոնք հայ անունն են կրում։

Բ. Քէչեանի կոկորդիլեան արցունքին չըպէտք հաւատալ. նա ունի իր որոշ նպատակը. պոլսեցիք այդ գիտեն և զգուշանում են։ Երանի թէ կովկասցիք էլ մի փոքր խոր թափանցէին այդ էֆէնդիի տաճկամոլ հոգու մէջ։

Mars

ԳԻՈՐԳ Ծ. Վ. ԵՐԻՑԵՆ

—

Անցեալ կիրակի, փետրւարի 22-ին՝ ս. Էջմիածնում Վեհափառ Կաթուղիկոսը եպիսկոպոս օծեց Երուսաղէմի կ. Պոլսում պատրիարքական տեղապահ Գէորգ ծ. վ. Երիցեանին։

Հոգևոր աստիճանով ծ. վարդապետ, նա հէնց այժմ էլ վարում է Երուսաղէմայ պատրիարքական փոխանորդի պատասխանատու պաշտօնը, ապացուցանելով իր մտքի ճկունութիւնը, իր անկաշառ բնաւորութիւնը և հաստատուն կամքը։

Պաշտօնները չեն բարձրացնում մարդուն, այլ մարդիկ են բարձրացնում պաշտօններին։ Աշըգհոնի օրով պատրիարքութիւնը իջած էր

նակ է տանում ճշմարիտ քաղաքակրթութեան դէմ, խղճի, մտքի և մարդկային տարբական իրաւունքների ազատութեան դէմ, ուրեմն զարմանալի չէ V-րդ դարում խղճի ազատութեան ուխտեալ դրօշակակիցների կրած պարտութիւնը։

Ս. Մ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Թատրոն, երաժշտութիւն

ԲԱԳԻԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԻ ԳԱՍՏՐՈԼՆԵՐԸ ԹԻՓԼԻՍՈՒՄ

Առաջին ներկայացումն Բագւի հայ դրամատիկական խմբի։ Մեծ աֆիշ։ Ազգանուններով թուում երկուսը՝ տ. Սիրաճոյճ և պ. Թուրեան տպագրած մեծ տառերով։ Պիէսը «Ադրիէն լը Քուվրէօր» Սկրիբի մելոդրամը։ Յայտարարւում է ներկայացման սկիզբը ճիշտ 8 ժամին, յայտարարւում է թէ թատրոնը տաքացրած կրլինի ըստ պատճաճի։ Ռէժիսօր Ա. Ալլահվերդեան։ Սկսւում է ներկայացումը ևիcs ժամը 8 և $^3/_4$-ին, վարագոյրը բարձրանում է թէ չէ, հասարակութիւնը դուրս է վազում... վերարկուներ և կրկնակօշիկներ հագնելու, որովհետև բեմից փչում է կատաբեալ սառնամանիք։ Կապելդիները մտնում են աւելորդ դրած աթոռները դուրս տանելու, որովհետև չընայած հայի թատրոնական անտրեպրիզի յոյսերին՝ կաստայում վաճառւած տոմսակների դումարը 200 րուբլու էլ չէ հասել և թատրոնը ոչ թէ կիսով չափ, այլ գրեթէ $^3/_4$-ով դատարկ էր։ Երաժիշտներից մի քանիսը կանգնել են ռամպի առաջ և կրնթնել ռամպին ու դիտում են բեմը, իսկ մի քանիսը դիտում են հասարակութիւնը... Իլլիւզիա։ Բայց թողնենք արտաքինը, անցնենք ներքինին. —Ադրիէն լը Քուվրէօր ֆրանսիական հռչակաւոր դերասանուհին (*ի ղէմն հայ հռչակաւոր դերասանուհի տ. Սիրանոյշի*) սիրահարած է Սակսոնիայի կոմս Մորիսի (*պ. Աբէլեան*) վրայ, որին սիրում է նոյնպէս իշխանուհի դը Բուիօն (*օր. Վաղինեան*)։ Վերջինս նախանձից գրգռւած բանտարկել է տալիս դուքս Մորիսին՝ յանուն նրա պարտքերի. լը Քուվրէօրն ազատում է իր սիրոյ առարկան, օգտւելով մասամբ այն գումարից, որ առաջարկում է ծերունի բժիշկը և անսահման սիրով դերասանուհուն սիրող Միշօնէն (*պ. Թուրեան*)։ Դուքս Մորիսը շատ ուշ է իմանում, որ իրան ազատողը ոչ թէ իշխանուհի դը Բուիօնն էր, այլ Ադրիէնը և այդ դաղտնիքն իմանալուն հետ երբ պատրաստւում է իր բոլոր սէրը և ոգին նւիրել Ադրիէնին, *սոսկումով տեսնում է որ* Ադրիէնին *թունաւորւած է այն թոյնով, որ իշխանուհի դը Բուիօնը չարամտութեամբ սրսկել էր* Ադրիէնին *ուղարկած ծաղիկների վրայ։* Ջղային ցնցումներ, խելագարութիւն, ցնորք, հալլիւսինացիա, էլի խելագարութիւն, էլի ցնորք, մահւան տագնապ, անկումն, ցնցումներ, վերջապէս, վերջապէս... մահ, Ադրիէնը մեռնում է, իսկ Մորիսը նրա դիակի վրայ երդումներ է անում։

Մենք նախապաշարւած չենք մելոդրամների դէմ. ընդհակառակն գտնում ենք որ մելոդրամների մէջ մարդկանց զգացմունքներն աղնւացնող շատ և շատ տարրեր կան, մանաւանդ մեր ժողովրդի համար, որի զգացմունքները փափկանալու շատ և շատ կարօտ են. բայց երդում ենք Մելպոմէնի գրլխով, որ Ադրիէն լը Քուվրէօր դրաման այդ տեսակներից չէ. նա չէ դրւած հասարակութեան համար, այլ դերասանուհու, որ կրկամենայ և կարող կրլինի իր բեմական արւեստի բուն տեխնիքական նրբութիւնները ցոյց տալ ոչ այնքան հասարակութեան, որքան ռէցենզենտներին։ Մենք տեսել ենք այդ պիէսը Պարիզի ֆրանսիական բեմի վրայ, և դէմս մի քիչ աւելի ձեռնհաս արտիստների քան բագւի դրամատիկական խմբի արտիստները, և կարող ենք հաւատացնել, որ ֆրանսիացիք աւելի լաւ կրներկայացնէին «Պէպօ», «Էս էլ ֆի Մօցիլուբին», քան թէ բագւի դրամատիկական խմբը—«Ադրիէն լը Քուվրէօր»։ Մի մոռանաք, որ մենք դորձ ունինք ներկայ դէպքում գաստրոլեօրների և ոչ սովորական խմբի հետ։ Կասկած չըկայ, եթէ սկսենք առանձին առանձին իւրաքանչիւր արտիստուհու և արտիստի խաղի մասին խօսել, անշուշտ մէկը միւսից մի քիչ աւելի լաւ կրլինի կամ վատ. բայց հէնց այդ դէպքի համար է ասւած թէ comporaison n'est pas raison! Կարծէք թէ ամեն չանք դորձ էր դրւած, որ ոչ ոք իր դերում չըլինի, բացի տ. Սիրաճոյճից, օր. Վարդիթերից և պ. Պետրոսեանից։ Խեղճ պ. Թուրեանին նահատակել է նշանակում—նրան տալ մի այնպիսի դեր՝ որ կատարեալ դրամատիկական է և ոչ կոմիքական և միայն պ. Թուրեանի տաղանդին և փորձառութեանը պիտի վերագրել, որ զարմանալի, հիացման արժանի սահունութեամբ տարաւ իր դերը, մի վայրկեան անգամ ծիծաղ չըպատճառելով ժողովրդին։ Այդ ուղղութեամբ որ դնան բագւի դրամ. խմբի ղեկավարները, պ. Թուրեանին կըհարկադրեն նաև Արմայիրի դերը խաղալ։ Խմբի մէջ ուժեղ, լուրջ ու դրամատիքական դերի համար կայ այնպիսի փորձւած և խելօք դերասան, ինչպէս պ. Աբէլեան, որին նոյնպէս նահատակում էին այդ դիշեր, բեմ հանելով սիրահարի դերում, մինչդեռ այդ դերի համար ևս խմբի մէջ կայ պ. Օհանեան։ Արդ, թող մտածէ թատրոնը սիրող և թատրոնական գործից հասկացող հասարակութիւնը թէ կարելի է խօսել այն յարգելի դերասանների խաղի մասին, որոնց այդքան անխնայաբար բեմ են քշում, ոչ իրանց դերերում։ Մենք ձեռնպահ ենք մնում, յուսալով միայն որ դերասաններն իրանք դէթ հաւատարիմ կրմնան այսուհետև իրանց ամպլուայինն, իսկ միւս անգամ անխնայ կրլինենք։ Պարտք ենք համարում նկատել առանձին, որ այդ երեկոյ բեմի վրայ տիրապետում էր իր խելացի, մտածած և ճշդրիտ խաղով օր. Վարդիթեր և

օրիորդի, պ. Թուրեանի և մասամբ տիկ. Սիրանոյշի խաղին ենք պարտական, որ ներկայացումը հնար եղաւ նայել մինչև վերջը։ Բայց ինչ թողեց նա հանդիսատեսի սրտի և մտքի վրայ։ Չանգիստ խղճով կարող ենք ասել —ոչինչ կամ համարեա ոչինչ։

—

Իտալական օպերային գաստրոլեորները յաջողութիւն ունին Թիֆլիսում։ Երաժշտասէր մեր հասարակութեան մեծագոյն մասը թէև զսպում է իրան և դեռ թատրոն չէ սկսել յաճախել, սակայն մի անգամ տ. Ջուզեպինա Ուհեյդի սոխականման գայլայլիկը լսողը, տ. Մոնտի-Բրիւնեռին տեսնողը այլ ևս անկարող է հետևեալ երեկոն էլ թատրոն չըգնալ։ Պ. Մատասսինի լիրիկ տենոր ունի, ձայնը թէև ոչ մեծ, սակայն արծաթահնչիւն, թարմ և յստակ։ Պ. Ասֆլերо բարիտոն է. ձայնը մեծ, գրիմի և հագուստի մէջ կամայականութիւններ է անում։ Պ Տամանի բաս է դիւրեկան։ Տիկին և պարոն Կոկինիս ամենայն յաջողութեամբ մասնակից են այս գաստրոլեորներին ու համարեա ամեն երեկոյ անդադրում երգում են։

Յետևեալ շաբաթւանից կըսկսենք մեր ընթերցողներին աւելի մանրամասն ծանօթացնել մեր գեղագէտ հիւրերի հետ։

Օր. Պապայեանը և պ. Կամիօնսկի մասնակցում են մեր և հագւայ օպերին ներկայացումներին, շնորհիւ ճանապարհների յարմար հաղորդակցութեան։

—

ԴԵՂԱՐՒԵՍՏԸ ԵՒ ԴԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Ռուսաց գրող Գրիգորովիչ մի զեկուցում է կարդացել գեղարուեստի և գեղարուեստական արդիւնագործութեան մասին, որի կարևոր կէտերը բերում ենք։

Գեղարուեստի մէջ առաջին տեղը բռնում է այն գործը, որ իր ձևերի գեղեցկութեամբ աւելի զօրեղ կերպով է ներգործում մարդու գեղագիտական զգացման վրայ։ Դժուար է ասել, թէ գեղարուեստի որ ճիւղն է աւելի բարձրը, որովհետև շատ անգամ սրանք այնպէս միանում են իրար հետ, որ անհնար է որոշել, թէ որն աւելի նշանակութիւն ունի։

Ինչ վերաբերում է գեղարուեստի գործածութեանը արդիւնագործութեան մէջ, Ռուսաստանում այդ մասին օտարոտի հայեացք է տիրապետում։ Մինչդեռ Ֆրանսիայում հազիւ է պատահում, որ տաղանդաւոր գեղարուեստաւորը չըմասնակցէ արդիւնագործական ասպարիզում իր ստեղծագործութեամբ, Ռուսաստանում ընդհակառակն՝ տաղանդ ունեցող գեղարուեստաւորը իր համար անարժան է համարում սրանով պարապելը։ Սակայն սրանց մասնակցութիւնը ամենալաւ միջոց կըլիներ ժողովրդի մէջ գեղեցկութեան զգացում տարածելու։

Զեկուցանողի կարծիքով իւրաքանչիւր առարկայ, ինչ բանի էլ նա ծառայէ, այնուամենայնիւ կարող է գեղարուեստական աշխատութիւն համարել, եթէ նա պատրաստած է ճաշակով և գեղեցիկ է։ Ի վերջոյ Գրիգորովիչ խորհուրդ է տալիս իր հայրենակիցներին օրինակ վերցնել Ճապոնացոց արդիւնագործութիւնից և հնադարեան արուեստից։

—

ԿԱԼԷՅԴՈՍԿՈՊ

—

Ընտան. իրաւունք։ Ժողովրդ. յարաբերութ։ Սպենսերի երկերը։ Բնագէտ Լունկեւիչ։

—

«Недѣля» շաբաթաթերթը (№ 5) զեղեցկել է մի յօդուած ընտանեկան իրաւունքը կանոնաւորելու մասին։ Ըստ դա պիտի պետական խորհրդի առարկայ դառնայ և առանձին յանձնաժողով է կազմուած ամուսինների բաժանման և ապօրինի ծնուածների դրութիւնը բարւոքելու մասին։ Այդպիսով ուրեմն ներկայ տարի պիտի վճռուին մի շարք կարևոր կենսական խնդիրներ։ Այդ խնդրի նշանակութիւնը վաղուց զգացուում էր, որովհետև հին օրէնքը խիստ արհամարհական կերպով էր վերաբերուում դէպի կենսական բազմաթիւ պայմանները, ըստ որում նա իրական կեանքի կենդանի պահանջները ենթարկում էր վերացական սկզբունքին և սրանով ստեղծում էր մի շարք անբնական երևոյթներ։ Հին օրէնքը պնդում էր, որ «ամուսինները պարտաւորեն միասին ապրել»։ Ոչ բնաւորութիւնների հակառակութիւնը, ոչ ամուսիններից մէկի տգեղ դործողութիւնները, ոչ էլ նոյն իսկ այն պատճառները, որոնք օրէնքի կարծիքով արդարացի էին, (որովհետև շատ դժուար է լինում ապացուցել սրանց գոյութիւնը) չէին ազատում ամուսիններին միասին կենակցելու տանջանքից։ Ջաբաթաթերթը յոյս ունի, որ շուտով խնդիրը կը լուծուի ժամանակակից սկզբունքներին համապատասխան կերպով։

***

Ժողովրդական լսարանները Ռուսաստանում օրէցօր բազմանում են։ Պօլտաւայի քաղաքային վարչութիւնը որոշել է ժողովրդական լսարանի համար շէնք կառուցանել։ Շէնքը պիտի պարունակէ ժողովրդական լսարան, ժողովրդական ձրի ընթերցարան և թէյարան։ Լսարանի դահլիճը պիտի կարողանայ տեղաւորել հազար մարդ, ունենայ բեմ, յարմարեցրած թատրոնական ներկայացումների, համերգների և պարահանդէսների համար։ Ընթերցարանում և թէյարանում պիտի տեղաւորուին 50 մարդ։ Շէնքը պիտի նստի 80,000 րուբլի։ Ծրագիրը կազմելու համար մրցանակ է նշանակուած։

***

Մեր դարի նշանաւոր փիլիսոփայ Սպենսերի մի նկատողութիւնից երեւում է, թէ որքան է գնահատում հասարակութիւնը լուրջ գրական աշխատութիւնները։ Սպենսերի «Սօցիալական բառամատեան» գրքից հրատարակուած է 750 օրինակ, որ տարածուել է 14 տարում։ «Հոգեբանութեան սկզբունքները», նոյնպէս հրատարակուած է 750 օր., որոնցից 100-ը հեղինակը բաժանել է, իսկ մնացեալը ծախսել է տասներկու տարի ու կէս տում։ «Փորձերը» հրատարակել է 500 օր. և տարածուել տասն ու կէս տարում։ Սպենսեր նկատում է, որ եթէ հասարակութեան առաջարկէին կամ օրական մի բաժին ձկան եղ խմել, կամ նրա հոգեբանութիւնից մի գլուխ կարդալ, ապա հարիւրից 99 ը կ'ընտրէր առաջին միջոցը...

***

Անցեալ տարի Տարազի մէջ քննադատուեց մեր բնագէտ Լունկևիչի «Երկնքի եւ երկրի մասին» գրքոյկը։ Տարազում այն միտքը յայտնուեց, որ պ. Լունկևիչի գրքոյկը խիստ անմշակ է և շատ հեռու ժողովրդին մատչելի լինելու իդէալից։ Այժմ նոյն պարոնը հրատարակել է մի ուրիշ գիրք մանուկների համար ռուսերէն

լեզուով «Среди животныхъ» վերնագրով, որը գրախօսւած է ռուսաց մանկավարժական ամսագրի մէջ (Педагог. листокъ, 1898, № 1)։ Գրախօսը բազմաթիւ օրինակներով ցոյց է տալիս, որ Լունկևիչի գերքը կատարելապէս թոյլ է թէ մտքերի և թէ լեզւի (ոճի) կողմից. ուրեմն կրկնում է այն, ինչոր Տարագի քննադատն ասել է անցեալ տարի նոյն հեղինակի մի ուրիշ գրքի մասին։

ԱՆՎԱՅԵԼ ԱԿՆԱՐԿ

Բագւի Հայոց Մարդասիրական ընկերութեան այս տարւայ Հայկական երեկոյթի մասին Մշակ լրագրի № 26-ում տպւած է մի նկարագրութիւն։ Այդ նկարագրութիւնը իր մի քանի անվայել ակնարկներով յարուցել է շատ իրաւացի ոչ միայն բագուցիների այլև բոլոր քիչ թէ շատ վայելչասէր ընթերցողների զայրոյթը։ Բանն այնտեղ է հասել, որ նոյն իսկ Մշակի մշտական թղթակից-աշխատակից պ. Յ. Սաղաթելեանը իր սիրած լրագրի վերջին համարում շտապում է զգուշացնել, որ այդ այլանդակ գրութեան հեղինակը ինքը չէ։ Կարդալով այդ նկարագրութիւնը և ճանաչելով պ. Սաղաթելեանին իբրև բարձրագոյն կրթութեան տէր մարդու, չենք կասկածում, որ նա երբէք չէր գրիլ մի այդպիսի յօդւած, ուր ի թիւս շատ գոհարների, կայ և մի տզեղ նկատողութիւն երեկոյթի կենդանի պատկերներին մասնակցող օրիորդների և տիկինների արտաքինի վերաբերմամբ։

Ահա այդ քստմնելի նկատողութիւնը. «Գոնէ դէմոկրատական գեղեցիկ ներկայացուցիչներին հրաւիրէին... թէ դրա համար էլ հարկաւոր է պրիվիլեգիա ունենալ բագւում»։

Հասկանում էք, ընթերցող, թէ մարդ որքան անկիրթ և քաղաքավարութեան վերջին կանոնից դուրկ պիտի լինի հրապարակօրէն մի այդպիսի անվայել դիտողութիւն անելու, կին-էակի վերաբերմամբ։ Եւ այդ տեսակ տողերի հեղինակը, որ համարձակութիւն չունի իր երեսը ցոյց տալու, դեռ յանդգնում է գեղարւեստի մասին խօսելու, յանդգնում է մեղադրել Բագւի Հայ ինտելլիգենցիային, թէ նա ճաշակ չունի։

Սակայն մեզ ոչ այնքան անյայտ յօդւածագիրն է զայրացնում, որքան Մշակի կոլլեգեալ խմբագրութիւնը, որ տպել է այդ յօդւածը։ Մինչէ անգամ անճանգիստ բաղկացած այդ խմբագրութեան մէջ չգտնուեց գէթ մի հատիկ մարդ, որ հասկացնէր միւսներին, թէ նոյն իսկ ամենավերջին կառապանը պարտաւոր է յարգել կնոջ համեստութիւնը և ամօթխածութիւնը և թէ չի կարելի այդպէս հրապարակօրէն վիրաւորել մի խումբ յարգելի տիկիններին և օրիորդներին, որոնք բարեգործական անունով գնացել, մասնակցել են կենդանի պատկերներին։ Մինչէ այդ մարդիկ գոնէ չեն տեսել Թիֆլիսի կինոներին, որոնք երբ ձիաքարշ վագոնի վրայ տեսնում են մի կին ոտքի վրայ կանգնած, շտապում են իրանց տեղը նրան տալ, իրանք ոտքի կանգնելով։

Գրիդոր Արծրունու անարժան աշակերտները չգիտէ՞ մոռանան գոնէ այնքանը, որ Հանդուցեալը երբէք չէր ակնարկում մարդկանց մանաւանդ կանանց արտաքինի մասին։

ԼՈՒՐԵՐ

Այսօր, կիրակի, մարտի 1-ին ի Ցէր հանգուցեալ Ալեքսանդր II Նահատակման օրը էջմիածնի վանական եկեղեցում պատարագից յետոյ կրկնատուի հոգեհանգիստ։

Վրաստանի և Իմէրեթի էքզարխ սրբազան Հ. Վլադիմիր բարձրագոյն հրամայւած է լինել Մոսկւայի միտրոպոլիտ։ Իսկ Վարշաւի թեմի արքեպիսկոպոս սրբազան Հ. Ֆլաւիան նշանակւած է Վրաստանի էքզարխ։

Հ. Ֆլաւիան վաթսունական թւի ուսանողներից է և աւարտել է Մոսկւայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտը։

Անցեալ կիրակի Մցխէթի տաճարում հանգուցեալ Հերակլ II թագաւորի թաղման հարիւրամեակին Վրաստանի էքզարխը կատարեց հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ։

Աղօթողների մեծ բազմութիւն լցրել էր տաճարը։ Ներկայ էին Թիֆլիսից և Վրաստանի մի քանի քաղաքներից պատգամաւորներ։ Թիֆ. ազնւականութիւնը ճոխ սեղան ունէր պատգամաւորների համար։ Վաճառւում էր հանգուցեալ թագաւորի կենսագրութիւնը բրօշիւր վրացերէն լեզւով և պատկերը։

Կանանց մասնաժողովը բարեգործական նպատակով վաճառում էր ուտելիք։

Նոյն օրը Թիֆլիս քաղաքն էլ իր խորհրդարանի դահլիճում հանգիսաւոր հոգեհանգիստ կատարեց։ Ներկայ էին պ. նահանգապետը, քաղաք. իրաւասուները, քաղաքիս բոլոր դաւանութիւններին պատկանող հոգևորականութեան ներկայացուցիչներ, համքարները իրանց սգակիր դրօշակներով։

Հայ գաղթականների հայրենիք վերադարձնելու համար, Վեհ. Կաթուղիկոսը բանակցութիւններ է սկսել ուր որ հարկն է, որպէսզի կարգադրւի գարնանը այդ որոշումի իրագործումը։

Ֆինանսների մինիստրութիւնը մտադիր է Կովկասի նաւթարդիւնաբերութեան վրայ առանձին ուշադրութիւն դարձնել և միջոցներ ձեռք առնել, որ այդ արդիւնաբերութիւնը ռուս գրամատէրերի ձեռքում լինի։

Անցեալ կիրակի գիշեր Վանքի մայր տաճարը կողոպտեցին, կոտրելով հիւսիսային կողմի լուսամուտը։ Գողերը տարել են եկեղեցական սպասներ՝ քշոց, սկիհ, խաչ, շուրջառ և այլն։ Մօտ 600 ր. իրեր։

Արդէն 5 և 3 րուլիանոց ոսկէդրամներ շրջանառութեան մէջ են։ Ֆինանսների մինիստրի հրամանով արքունի գանձարանները այլևս չընդունում են բաց թողնեն մեկ եւ հինգ րուբլիանոցներ ու պէտք է պակասացնեն երեք և տասը րուբլիանոց թղթադրամների շրջանառութիւնը։

Ռոդշիլդ և Բուսա Նաւթային շտաբւանները բագւում այլևս են։ Վնասները մեծ են։

Գարնան սկզբին գալու է ամերիկացի գիտնականների մի խումբ Ղրիմի ու Կովկասի հետ ծանօթանալու նպատակով։

Կաղզուանից պ. Ա. մեզ գրում է.

Փետր. 13-ին տեղւոյս բարեգործական ընկերութեան ճիւղի վարչութիւնը տւեց մի երեկոյթ,խմբական երգեցողութեամբ, պարով և ներկայացրեց. ,,Ինչ էլ ի մոցիմուբին'' վոդեվիլը. Դերակատար ներից աչքի էին ընկնում բժ. Կաճկաճեանց և պ. Փարսադանեանց, որոնք բաւական յաջող էին, իսկ մնացածներից իրանց դերը չըփչացրեց միայն օր Խաժակնեանը:

Մուտքը շատ յաջող էր, մօտաւորապէս 150 ր.: Ներկայ եղողները պատմում են, որ այսպիսի բազմամարդ երբէք չի եղել:

Լսելով, վարչութիւնը մտադիր է ընթերցարան բանալու. բայց ասում են, ահա չորս ամիս է խորհրդից ոչ մի տեղեկութիւն չեն ստացել: Այսպիսի մի օգտակար հիմնարկութեան բացման ուշանալու պատճառը այստեղ յայտնի չէ:

ՄԱՀՓՈՅԻ

Վ. Սատկովսկի

Ցիսուն տարի անդադրում ճիւրեած կովկասին եւ իր ժառաջան, բեղմնաւոր գործունէութեամբ Կովկասում յայտնի Վ. Սատկովսկին 73 տարեկան հասակում վախճանեց Նալբայում եւ օրերս մարմինը կըբերւի Թիֆլիս, պատրաստւոր յարգանք մատուցանելուց յետոյ սեռ հողին յանձնելու համար:

Սատկովսկի ճանապարհների հաղորդակցութեան պատճառիչ եւ ապա կառավարիչ էր: Ռուզմավիրական ճանապարհը սրա գիւտն է: Հանգուցեալը գրական ասխարհին էլ հաջ ծանօթ է իր գիտական հետազօտութիւններով, Կովկասի կլիմայի ուսումնասիրութեամբ եւ բազմաթիւ յօդւածներով գիտութեան այլեւայլ ճիւղերին վերաբերեալ: Սատկովսկին երկար ժամանակ եղել է Թիֆ. հարաւ. իրաւասու եւ Տեխնիկական ընկ. ճախագահ:

ՁՄՐԱՆ ՎԵՐՋԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Դեռ մի ամիս առաջ էր, որ հեզ մանուշակի սիրուն փնջիկները ողջունում էին մեզ աւետելով մօտալուտ գարունը: Սակայն մի երկու տարի սրանից առաջ տարբերքի խաղն ու կատակը, որ Խտալիայում պատահեց, նոյնն այժմ մեզ մօտ է կրկնւել: Անցեալ կիրակի երեկոյից սկսած՝ երկնքից փաթիլ փաթիլ ձիւնը գալիս է համարեա ամբողջ շաբաթ և Թիֆլիսը ծածկւած է ամբողջովին սպիտակ սաւանով: Սահնակները պանում են մէկը միւսի ետևից, արշաւելով լայնատարած Գոլովինսկիով դէպի ռազմավիրական ճանապարհը: Ձիաքարշը երկու օր շարունակ ստիպւած էր ընդհատել քաղաքում իր գնացքը: Հալւագիւտ է Թիֆլիսում այս աստիճան երկարատև ձիւն և քաղաքիս ունևորների համար կատարեալ բարեկենդան է բնութեան այս բարիքը, որ խղճուկին աւելի է կուչ ածել, աւելի կաշկանդել իր ճիրաններում:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱԶԹԱՐԻՒ

Նաւթագործների ժողովի խորհրդին յայտնւած է ասելիք լեզւով հրատարակել „Нефтяное дѣло“ անունով մի շաբաթաթերթ ճիւրւած նաւթարդիւնաբերութեան: Պատասխանատու խմբագիր հաստատւած է պ. Պ. Ղուկասեանց:

—Ս. Էջմիածնայ օրգան Արարատ ամսագրի նոր ծրագիրը հաստատել է ներքին գործոց նախարարը: Առաջնին փոփոխութիւններ համարեա չըկան նոր ծրագրի մէջ: Արարատ ամսագիրը, ինչպէս ժամանակին հաղորդել էինք, ենթարկւում է այժմ բնդհանուր ցենզուրայի եւ ինչպէս յայտնի է, լոյս կըտեսնի ամեն հինգշաբթի:

—Կ. Պոլսի նախկին Փառոս շաբաթաթերթը այժմ լոյս է տնանում ամեն օր եւ յիշեցնում նախկին Ժամանակ: Հրատարակիչն է հայ գրական շրջանին ծանօթ Կ. Բերիւճեան: Գինը տարին 40 Ֆ.:

Նոր հրատարակութիւններ

—

Մեզ ուղարկւած են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1. «Մանրեաբանութիւն», գրեց դ.ք. Ն. Տաղաւարեան — Ազատ ի Փիտութիւնս (Licencie es Scienses) վկայեալ հարիւրս հաստէօրեան ուսումնարանին, օգնական բժիշկ Վրանսիական հիւանդանոցին Կ. Պոլսոյ: Գիրքը պատկերազարդ է, 144 էջ, միջադիր. գինն է 10 դրուշ, տպագրւած Կ. Պոլիս, Նշան Կ. Պէրպերեանի տպարանում սոյն թուին:

2. «Послѣдніе годы грузинскаго царств.» посмерт. трудъ ген.-лейт. С. І. Кишмишева.

Հանգուցեալ գեն. Ս. Քիշմիշեանի սոյն աշխատութիւնը, որի մէջ նկարագրւած են վրաց թագաւորութեան վերջին տարիները, կարդացւում է հետաքրքրութեամբ: Ափսոս գրւածքը չի աւարտած. Գիրքը միջադիր է, 113 էջ, գինը 40 կոպ. տպած Թիֆլիս, Կազլովսկու տպարանում, վաճառւում է Կ. Ն. Բեգիչևի գրավաճառանոցում:

3. «Սաճօ» (Հայ բօշաների կեանքից) Վ. Փափազեանի: Առհասարակ հայ բօշաների կեանքից գրւածքները յափշտակութեամբ են կարդացւում և Փափազեանին յաջոդւում է նրանց մէջ պատմւող աւանդութիւնները սահուն ոճով գրել: Գիրքը արտատպւած է «Արձագանքից», միջադիր է, 69 էջ, տպած Մ. Մարտիրոսեանցի տպարանում, գինը 30 կ., որ շատ թանգ է:

4. «Ամուրին» Յարութիւն Թումանեանցի: Այս գրւածը որոշ չափով երգիծաբանական է: «Ամուրին» թէև դիւրութեամբ է կարդացւում, բայց չի թողնում տպաւորութիւն: Տպագրւած է Թիֆլիս Վրաց Տրատ. Ընկ. տպարանում, միջադիր է, 30 էջ, գինը 20 կոպ.:

5. «Հիւրակն» ԺԲ. նոր շրջան: Կ. Պոլսում անցեալ դեկտեմբերից սկսեց հրատարակւել Գ. Անդրէասեանի խմբագրութեամբ «Հիւրանկն» լրագիրը. առ այժմ, ինչպէս յայտարարում է, լոյս կըտեսնի ամեն հինգշաբթի:

Մեր ստացած թւերից երևում է, որ նրա խմբագրութիւնը ամեն ջանք գործ է դնում լրագիրը հետաքրքիր դարձնելու: Հիւրակնի արտօնատէրն է Տ. Ստ. Իւթիւճեան, իսկ տնօրէնը Ս. Դաւթեան. Հաժանորդագինը 50 դրուշ, օտար երկրների համար 12 ֆրանկ:

Խառն լուրեր

—Միկավօ նահանգի (Եապոնիա) բնակիչները չափազանց գրգռւած են, որովհետև շուտով ամբողջ երկիրը բացելու է օտարականների յարաբերութեան համար: Նորերս մի խումբ հոգևորականներ և մասնաւոր մարդիկ ժողով կայացրին ու վճռեցին. 1) ատելութեամբ վերաբերւել դէպի օտարականները և սկզբունքով ոչինչ չընծայել նրանց, 2) բոլորովին չըտալ օտարականներին վարձով տներ կամ հողեր, 3) անպայման կերպով զգուշանալ օտարազգի բառեր գործածելուց, թէ խօսակցութեան ու թէ գրութեան մէջ, 5) կատարելապէս չըլսել քրիստոնէական քարոզներ:

—Կրէտէի հարցը լուծելու համար էլ օձին չի մնում որ չըհանեն: Այժմ էլ մտածում են յանձնել նրա կառավա-

րութիւնը ժամանակաւորապես երկու պետութիւնների։ Դէ հիմա պէտք է որոշել երկու պետութիւններից որին յանձնել։ Եթէ սուլթանին հարցնեն այդ մասին, նա կառաջարկէ մէկ Լիրան, մէկ էլ Գերմանիային։

—Անգլիան նորից բարձրացրել է Տաճկաստանի ներքին բարեկարգութիւնների հարցը և ի միջի այլոց, պահանջում է նշանակել քրիստոնեայ նահանգապետներ այն նահանգներում, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը քրիստոնեայ է։ Բայց Անգլիան պիտի գիտենայ, որ եթէ հինգ տարի էլ ձգձգէլ, այնուհետև քրիստոնեայ մեծամասնութիւն ունեցող նահանգ էլ գոյութիւն չի ունենալ։

—Ռուս. գործակալութիւնը փետրուարի 26-ից հետևեալն է հաղորդում պետութիւնների վինուորական նաւատորմիղները զօրեզացնելու մասին։ Ռուսիան (Բարձրագոյն ուկազով) անհրաժեշտ համարելով զօրեզացնել վինուորական նաւատորմը, սովորական նախահաշիւից այժմ և եւթ բաց է թողնում պետ գանձարանից 90 միլիօն րուբլի։ Անգլիայում նաւատորմի ծաւալողների թիւը մեծացնում է 6,370 մարդով, որոնց թւում և 200 օֆիցէր։ Ամերիկայում պատգամաւորների ժողովը նախագահի տրամադրութեան տակ է դրել 50 միլիօն դոլլար երկրի պաշտպանութեան համար։

Մեր պատկերները

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ. ԿԵՆՔԻՑ

Ժամանակի ամենամեծ ինաւդութիւնը կարգն ու կարգապահութիւնն է։ Հեռաւոր Ամերիկայից վերջերս մի ուժեղ հոսանք է սկսել դէպի մեր հրեղէն ուխտերը անընդհատ կարգապահութիւն սովորեցնելու։ Գալէ մեր Բալախանին եւ Սեւ Քաղաքն էլ մի օր նմանին Տարազի ներկայ №-ում տպագրած Ամերիկայի զորաւարժական կեանքին, բայց ապահոս, որ այդ օրը այնեւս Բալախանին եւ Սեւ Քաղաքը de facto էլ մերը չեն լինիլ...

ՄԻԱՆԱՆՈՒՆԻՆ

Գարնանային արեւոյսին իսկոյն յայտնեց խոնաւ ատուրը։ Հայրենիքի ազատութեան համար ռազմի մէջ զնդակահար եղաւ նրա փեսացուն եւ իմն էլ այդ օրից բաւեց աճապարանքով այնտեղ գնելու մխիթարութիւն։ Այնուհետեւ այդ չքնաղ միանձնուհին ափսոսում էր իր նման բնաւորներին եւ նրանց միխիթարում։

Մեր այս պատկերին դիտողը կարծէք կարդում է այդ միանձնուհու աչքերում թէ *մարդիկ երջանկութիւն պիտի է փնտռեն ոչ թէ աշխարհի մէջ, այլ իրանց սրտի եւ հոգի խորումն։*

ՄԱՐԴԱԿԵՐՆԵՐ

Ինչէ՞ր չեն աւել *յաւուն Աստուծոյ*։ Ինչեր չեն աւել յաւուն կրօնի, այն սոսկալի դարում, ուր ռնւանւում էր ինկւիզիցիայի դար։ Ներկայ պատկերը ներկայացնում է այն սոսկալի տեսարաններից մէկը, ուր Աստուծոյ պատճառներ յաւուն Աւետարանի մարդկանց *հոգին փրկելու* պատրւակով իրանց աբիւնծարաւութիւնը յագեցնում էին նրանով, որ իրանց փառիքն չերկրպագող *հերետիկոսներ* մարմինը կտրում էին եւ շներին ուտացնում։ Ժամանակները փոխւել են, փոխւել է մարդկային մոլեռանդ եւ բարբարոսութեան ձեւը։ Եւ այդ նոր ձեւը շատ լաւ բնորոշեց *Էմիլ Զոլան* դատարանի դռնում գալիս նայելով այն ամբոխի վրայ, որ չրգիտէր ինչո՞ւ էր աղաղակում՝ *Մահ Զոլային։ — Մարդակերներ*, բացականչեց նա։

Այո, ուրիշ տեսակ են եւ ժամանակակից մարդակերները։

ԴԵՊԻ ԻՐԵՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՓՈՂԸ

Գտնւում է յուզում Եվր. Օսէրուհ-ի մէջ թախծալից չմայ *Տաթևանան* եւ որքան սրանչելի է կատարում այդ դերը *օր. Պապայեան*։ Սակայն *Օնեգին*, որ տիպրում խոյս է տալիս նրանից, *Օլգայի* բերելու հոգի բնաւորութեան շնորհիւ, մեծամարտութեան մէջ ապտնում է իր յաւ ընկեր *Լենսկուն*։ Մեր պատկերը ներկայացնում է այս տեսակ մի մենամարտութեան պատրաստութիւնը։

— —

Մատենադարան

Աստրախան. Տ. Մ. Ս.։ Բայց տարաբախտաբար էլ շատ կանայք, ինչպես իրաւացի նկատում է *Սանկեւիչ*, գրականութեան, փիլիսոփայութեան, նարտարապետութեան վրայ նոյն հայեացքն ունին, ինչ իրանց տալէտի այն պատրագների վրայ, որոնցով յանդիմ պնդում են նրանք, կարծելով, որ շատ ազ է գալիս դէմ հրեին։

Բագու. օր. Ս. Ք.։ Ձեր բանաստեղծութիւնները ամեն կողմից գալիս են։ Ձեր հասցէին նամակներ էլ կան ստացած խմբագրութեանս մէջ։ Խնդրում ենք կարգադրել։

Ծրուսադիմ. Դ. արք. նպ. Շ.։ Կանոնաւորապէս բոլորը ստանում ենք։ Ընդունելիք մեր ուղիական պատկառանքը։ *Ազբիւր-Տարագին* Ջահկանան ընծայ մի *ալմանախ* է պատրաստում։ Խնդրում ենք այս առիթով պատգամ գրած մեր նամակին վերջով ընթացք տալ։

Շամախի. Ս. Գ.։ Ստացել ենք պ. խ. վ.-ից եւ ուղարկում է նամանոյն ձեր տնօրէնութեան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՂԲԻՒՐ-ՏԸՐՈՋԻՆ կարելի է բաժանորդ գրել հագուստ պ. պ. եղբ. *Թառպչանցանովի* գրավաճառանոցում, հրապարակի՝ պ. *Ղուկասովի Աբելեանի* մօս։ Արհեստաւորներն ու բանւորները կարող են իրանց բաժանորդագիրը վճարել մաս-մաս։

ԲԱՐՁԿԻՒ ԽՆԱՅԻՔ
Ոսկէ եւ ադամանդէ առարկաներ։

(*Դուզովիանի պրոսպեկտ*)

Բացւած է *ոսկի* ապրանքների բաժանմունք, ուր ամենագեղեցիկ *պէնճուկներ* եւ ակնոցներ, շինւած *ռուսաց կրնայի* ոսկից։ Նոյնպէս պատրաստւում են ակնոցների պատւէրներ, նամանաւ՝ գանազան ակնոցներ եւ փչացածները վերանորոգում։ Ծախւում է հետադիտակներ։

Մեծ պատեաս գոհարեղէնի եւ ադամանդների։

Ծանօթ եմք առնում ուղարկել պատարողներին, գրադարաններին, առաջնորդներին, զարդացներին, այլ եւ այլ *հայկական գրքեր* 20—25% *զիջումով*։ Գրադարաններին 30% *զիջում*։

Գիրեր՝ Тифлисъ, Г. Арменіану, до востребованія. 5—2

Շարունակւում է

ԸՂԲԻՒՐՍԿԱՆ ՀԻՆԳԵՏԻ

18 8 թւի բաժանորդագրութիւնը

(Գ. տարի).

Բաժանորդագինն է՝ երկու գրքինը 3 *ր. մէկինը՝* 2 *ր.*։

Գիրեր՝ Ерванду Лалаянцъ, Тифлисъ, Базарная № 20. *կամ* Ներսիսեան դպրոց։ E. Lalaiantz, Tiflis, Sèminarie Nersissian. 3—1 *Հրատ. Ե. Լալայեան.*

Լոյս տեսաւ

Յարութիւն Թումանեանցի

«ԱՄՈՒՐԻՆ»

Երգիծաբանական գրւածք

Գինն է 20 կ.

Վաճառւում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում եւ հեղինակի մօս՝ Тифлисъ, Чавчавадзевская, д. Маркарова, № 25/а. 5—2

Дозв. ценз. Тифлисъ, 28 Февраля 1898 г. *Տպարան Ե. Մարտիրոսեանցի.* Тип. И. Мартиросіанца. Орбел. ул. № 1—2.